

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հարուստ ու բովանդակալից են անցյալ դարի 60-ական թթ. հայ դեմոկրատ բանաստեղծ ու հասարակական գործիչ, Հազարյան ճեմարանի հայոց լեզվի և դրականության ուսուցիչ Սմբատ Շահազիզի (1840—1907) գրական ժառանգության մի արժեքավոր մասը կազմող նամակները, Բանաստեղծի ջերմ հայրենասիրությունը արտահայտվել է ոչ միայն քնարական բանաստեղծությունների մեջ, քաղաքացիական պոեզիայում ու հրապարակախոսական հոդվածներում, այլև նրա բազմաթիվ նամակներում: Հատկապես արժեքավոր են եղբորորդուն՝ գրականագետ Երվանդ Շահազիզին (1856—1951) ուղղված հարյուրից ավելի նամակները, որոնք գրական արժեք ունենալուց բացի, կենսագրական հարուստ նյութ են պարունակում և լրացնում Սմբատ Շահազիզի կյանքի տակավին չուսումնասիրված էջերը: Այդ նամակներում արտացոլված են Շահազիզի հասարակական-կուլտուրական գործունեության շատ էջերը, նրա հայացքները անցյալի և իր ժամանակի շատ անցքերի, առանձին դեպքերի ու դեմքերի մասին, նրա ապրումները արևմտահայերի ծանր վիճակի կապակցությամբ և այլն: Հետաքրքիր են նաև բանաստեղծի տարբեր առիթներով արած պատմաբանասիրական դիտողությունները:

Ստորև տպագրում ենք Մելքոն Փանյանին, Երվանդ Շահազիզին, Պերճ Պողոսյանին, Մինաս Բերբերյանին ուղղված նամակները, որոնցում բացահայտվել են ժամանակի առաջադեմ մտածողի, հայրենասերի, հասարակական մեծ գործիչի տեսակետներն ու իմացությունը: Հրապարակվող նամակները պահվում են Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Սմբատ Շահազիզի անհատական ֆոնդում: Նամակների մի մասը տպագրվում է որոշ կրճատումներով:

Ա. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

1

6 հուլիսի 1879, Մոսկվա

Ազնիվ բարեկամ իմ Մելքոն Գասպարիչ¹

Հազարապատիկ շնորհակալ եմ քեզ քո անկեղծ բարեկամության համար: Ստացա Պոպովից² քո սիրո ողջույնը և հանդիմանությունը իմ համառոտ նամակագրության: Իմացիր, որ այժմ ես զբաղված եմ, թե որպես պիտո էր հարմարել և կազմել հանգուցելու վարքագրությունը, արժանավոր մարդու կյանքը պիտի գրված լինի և արժանավոր օրինակով: Սակայն ես շատ ցավում եմ, որ այս րոպեիս իմ ձեռքում ոչինչ աղբյուր չկա: Այնպես որ միտքս չի բավականանում բոլորը հիշել ու նորոգել:

Որքան իմ միտք է նազարյանցի շարադրությունները սորա են. 1. Беглый обзор о персидской литературе, 2. Гюлистан Саади в русском переводе, 3. Հոգեբանություն, 4. Վարդապետարան կրոնի, 5. Թարգմանություն Պաղվոս և Վերգիլի, 6. Հանդես նոր հայախոսության, 7. Հյուսիսափայլ: Սոցանցից եթե կարելի լիներ ուղարկել մի քանի բան, լավ կլիներ, այսինքն՝ Վարդապետարան կրոնի, Հոգեբանություն և Հյուսիսափայլի այն գրքերը, ուր դրվում են խմբագրի առաջնորդական հոդվածները: Առժամանակ սոքա բավական են:

Այժմ տոնավաճառի օրերն է, կարելի է մի հավատարիմ մարդու հանձնել, իսկ այդ հավատարիմ մարդը կարող է դոցա տալ Տեր-Հակոբյանի կոնտորին, որ Иижный базар-ումն է:

Նույնպես ինձ գրիր, ո՞չք էին Հյուսիսսփայլի վերջին տարվա դրամատուս պարոնները, շունի՞ս արդյոք Ճռաքաղի, Մեղվի և Կոռնկի այն համարները, ուր լինին քննությունը Հյուսիսսփայլի:

Եթե ուղարկելու լինես, շնորհաբար ուղարկել այն համարը, կամ այն հոդվածը, որ ժողովեց պոլիցիան: Եթե չեմ սխալվում, այդ հոդվածը պիտի լիներ Կոստանդնուպոլիսում պոռտեստանտ հայի պատճառով գրած, որ թաղվելով հայոց գերեզմանատանը, մեծ աղմուկ հանեց, ուր կա բառս բեֆորմա¹: Եթե բարվոք համարես և դժվար չլինի, ուղարկիր, որովհետև առանց դորա դրել կարելի չէ [...] Ճառախոսությունս, որպես ես մտածել եմ հորինել, շատերի քթին պիտի դիպչի և մասամբ ինձ վնաս բերե. բայց ինչ պիտի անել: Նաղարյանցի գործունեության դաշտը շատ լայն է և այդ դաշտերի վերա հազարավոր արգելքներ ու փշաբեր թփեր կան: Այդ բոլորը պիտի պարզել: Նամակս դադար պահել:

Մնամ սպասավոր Ձեր՝ Ս. Շահազիզ

1 Փանյան Մելքոն Գասպարի (1825—1901)—ազուլիսեցի, երկար ժամանակ վարել է Լաղարյան ճեմարանի տնտեսի, Մոսկվայի և Պետերբուրգի հայոց եկեղեցիների կալվածքները՝ կառավարիչի և երեցփոխի պաշտոնները: Բարեկամական կապի մեջ է եղել Ստ. Նաղարյանի և Սմբատ Շահազիզի հետ:

2 Պոպով Մկրտիչ—նորնախիջևանցի հարուստ Մարկոս աղա Պոպովի որդին: Բնակվել է Մոսկվայում, զբաղվել է բեռների փոխադրման գործով:

3 Ս. Շահազիզը նկատի ունի Ստ. Նաղարյանին: Երկու տարի հետո հրապարակվեց նրա «Հրապարակախոս ձայն» (1881, Մոսկվա) աշխատությունը, որի գրելու շարժառիթը Ալ. Երիցյանի «Ստեփանոս Նաղարյանց և նրա գրական գործունեությունը» («Փորձ», 1879, № 11 և 1880, № 1) հոդվածաշարն էր:

4 Խոսքը Ստ. Նաղարյանի «Արևմտյան եկեղեցու վերանորոգությունը, որ հայտնի է անունովս ունի փոքրամասն պատմական ակնարկի մասին է: Այս ակնարկում ներկայացված է XVI դարում Գերմանիայում Մարտին Լութերի գլխավորությամբ տեղի ունեցած հակակաթոլիկական շարժումը:

2

20 հուլիսի 1879 (տեղը հայտնի չէ)

Իմ աղնիվ բարեկամ Մելիֆոն Գասպարիչ

Մեր նամակները կարծես երկու ղուգահեռական գծեր երբեք միմյանց չեն հանդիպում յուր ժամանակին: Ես նամակս ճանապարհ ձգեցի և իսկույն ստացա քոնը: Այս մի դարմանալի բան է: Շնորհակալ եմ, որ մտածում ես ինձ ուղարկել իմ ցանկալին, միայն թե չուշանա: Ես կամիմ գրել Նաղարյանցի վարքը, նորա մատենագրական արժանավորությունը և պակասությունը, նորա ժամանակի աղգային վիճակը, հետևաբար և այն հակադրական կուսակցությունը, որ կաղմվել էր ընդդեմ Նաղարյանցի: Դժվար և փափուկ խնդիր, որ պիտի է ինձ լրացնել: Հարկավոր է ժամանակ, բայց այդ պարապ ժամանակը ես չունեմ. քերականությունս դեռ մնում է երեսի վրա ընկած:

Չկամիմ ծածկել քեզանից. նաղարյանցի վերջին օրերը¹ և վերջին ահարկու ժամերը նկարագրել եմ, որ ոչ սակավ արտասուք խլելու է քո աչքերից: Միայն խնդրում եմ առայժմս մնա մեր մեջ: Մի շաբաթից հետո կուղարկեմ «Փորձի» խմբագրությանը:

Ի՞նչպես է այն շիկամազ որդու անունը, լիք-լիք թշերով, որ մտավ հանգուցյալի ննջարանը, երբ ես գնացել էի նորան տեսության: Այնպես չէ՞, որ նաղարյանցի մեռավ 24-ին դեպի 25, որ էր հինգշաբթի: Սոցա հարկավոր է պատասխանել:

Անանյանի² գործը մի ծիծաղաշարժ դիպված է. այստեղ շատ ծիծաղեցինք դորա վերա: Միանսարյանը³ ի՞նչ է անում: Տեր հայրը ուզեցել է առյուծի բաժին ստանալ: Աբամելիքը⁴ նոցանցից չէ, որ մարդու խնդրածը շնորհե: Վերջին նաղարյանցի խնդիրը միտդ բեր, 150 մանեթ նշանակելով: Բայց այդ վերջին գործը արդարացի է: Մյուս բաների մասին կխոսենք, երբ գամ:

Մնամ սպասավորի ձեր Ա. Նաճագիզ

1 «Նաղարյանի վերջին օրերն ու վերջին ժամերը» տպագրվեց 1879 թ. նախ «Փորձում», լայնուհետև՝ «Հրապարակախոս ձայն» գրքում:

2 Անանյան Հովհաննես (Իվան, 1818—1880)—մոսկվաբնակ հայ կապիտալիստ:

3 Միանսարյան Միքայել (1829—1880)—աշխատակցել է «Հյուսիսափայլին»: 1868-ին Պետերբուրգում հրատարակել է «Քնար հայկական» երգարանը: Հեղինակ «Պատմություն Աղվանից աշխարհի» պատմաբանասիրական ակնարկի և այլն:

4 Աբամելիք Սիմեոն լազրե (1857—1916)—հնագետ: 1871 թ. լազարյան ճեմարանի պատվավոր հոգաբարձու:

3

28 հուլիսի 1879, Նիժնի Նովգորոդ

Ազնիվ բարեկամ Մելիքն Գասպարյան

Վերջին նամակդ նաղարյանցի գրացուցակով ստացա: Ես քեզ դրել էի, որ ոչ թե այժմ կամիմ տպել նաղարյանցի վարքը, կամ մատենագրական գործունեությունը, այլ նորա վերջին օրերը և վերջին ժամերը: Այս վերջին օրերը և վերջին ժամերը մեր ականավոր բարեկամի, այժմ ավելի սրտաշարժ պիտի լինի, քան մի այլ գործ. քանի կենդանի է մեր հիշողության մեջ նորա ահարկու և մարտիրոսական վիճակը, այնքան սաստիկ պիտի դղրդե և մեր սիրտը: Վարքագրությունը կամ նորա գործունեությունը այնպիսի բան է, որ միշտ կարելի է գրել, ոչ այսօր, այլև շարունակ, ժամանակից հետո: Ահա ինչու, ես առաջագույն դրոշմեցի նորա վերջին օրերը և վերջին ժամերը:

Հոգվածը արդեն արտագրված է, թեև շատ ցավում եմ, անպիտան և անհամ է արտագրված: Ինչ որ դու խնդրել էիր, արդեն ես նախատեսությամբ հիշել եմ, և շատ շնորհակալ եմ, որ ուղարկել էիր նորա գրացուցակը:

Հոգվածի մեջ, որ համարյա երկու մեծագիր նամակաթուղթ թերթ է բռնում, արված է առաջարկություն որդեգրության, արծաթ ժողովել, կազմելով պանդան քաղաքներում մասնաժողով և մի մահարձան կանգնել մեր բարեկամին: Լազարյան ճեմարանի ավարտած աշակերտները հրավիրվում են նպաստել գործին և պատվել յուրյանց պրոֆեսորի անունը: Քո բարեկամու-

թյունը² կամ նորա բարեկամությունը քո հետ այնպիսի խոսքերով նկարված է, որ սիրտդ արտասուք կկաթես. կարճ ու ազդու, որքան այդ ներում է պատշաճ: Ես քեզ խնդրել էի ոչ թե Բենստորֆի անունը գրես, որին բնավ կարոտ չեմ, այլ երկամյա որդու անունը, շիկամազ և հաստ թշերով: Այժմ հարկավորություն չկա իմանալու: Տեր-Հակոբյանք³ ողջունում են քեզ շնորհակալությունամբ: Նոքա ունեցել են այդ գրքերը, բայց թողել են Բաքվում:

Ամենայն սպասավորությամբ մնամ՝ Ս. Շահազիզ

1 «Փորձ» ամսագրի միջոցով Սմբատ Շահազիզը դիմեց հայ հասարակությանը նազարյանի շիրիմի վրա մահարձան կանգնեցնելու առաջարկով, որին իրենց մասնակցությունը բերեցին նաև Լազարյան ճեմարանի շրջանավարտները:

2 Մելքոն Փանյանը կապված է եղել Ստ. Նազարյանի հետ և բարձր է գնահատել նրա կուլտուր-լուսավորական գործունեությունը: Նազարյանի մահից հետո Փանյանը նշանակվել է Նազարյանի ընտանիքի խնամակալ: Շահազիզը Մելքոն Գասպարիչ Փանյանին երբեմն գիմել է Մելքոն Գասպարյան հորջորջումով:

3 Տեր-Հակոբյան Հովհաննես—Շահազիզի ընկերը Լազարյան ճեմարանում: Բնակվել է Նիժնի Նովոռոգում: Մի երկու ամառ Շահազիզը անց է կացրել նրա մոտ:

4

8 հունիսի 1884, Մոսկվա

Սիրելի Երվանդ¹

Ստացա քո նամակը և շատ ուրախացա, որ առողջ ես: Քո արտահայտած մտքերին Բաֆֆու վերաբերմամբ ես համաձայն չեմ. հոգևորական դասը յուր այժմյան ավանդական վիճակով երբեք օգտակար չէ կարող լինել որևիցե մարդկային ընկերության. ոչ թե մեր հայհոյանքն է պակսեցնում այդ դասի վարկը կամ պատիվը ժողովրդի աչքում, այլ նույնիսկ հոգևորականի վատթարումը և անվանարկությունը գտանվում է յուր մեջ, յուր անբնական կազմակերպության մեջ, յուր խարդախ, խաբեբա և փարիսական վարմունքի մեջ: Աշխարհին, ժամանակին, այն աննկատելի մարդկային հառաջխաղացությունը անկարելի է դրժել. ժամանակն է կուլ տալի յուր անարժան զավակներին. մի օր ևս եգիպտական քրմերը, հնդկական բրահմանները և զանազան ազգերի կրոնավորները մտածել են, որ յուրյանց տիրապետած կարգերից ուրիշ լավ կարգ չէ եղել. բայց ի՞նչ է եկել դրանց գլխին,— և ինձ, և քեզ քաջ ծանոթ է. անառակ և ավազակ մարդին կամ բեգին որքան և գովում է ստրկացած հպատակը, այնքան ևս ատում է սրտով, համարում է անառակ և ավազակ: Բայց արոնց տված է խելք և բանականություն, չէ կարող լուռ մնալ և թույլ տալ, որ անզգամը միշտ մնա անզգամ, որովհետև ստրուկները հնազանդ են: Գովաբանել կամ լուռ մնալ հոգևոր դասի անառակ և կաշառակեր ընթացքի մասին. ասել է և հորդորել, որ նա հանապազ սաստկացնե իր անառակությունները, իսկ այս ասել է և բնավ քայքայել, ցրվել և սպանել և՛ ժողովուրդը, և՛ նորա բարոյականությունը:

Հայոց ազգի մեջ եղած բոլոր կրոնափոխական ձգտողությունները եղել են նորա ընդհանուր անշարժության և լուծյան ժամանակը: Երբ տպագրական խոսքը հանդես դուրս եկավ և փոքրիշատե մոտեցավ ժողովուրդին, ձայնակից եղավ նորա ներքին կրոնական տարրերին, և ժողովուրդը դադարեց Վրոնափոխ լինել և որոշել կրոնը և հոգևորականը:

Րաֆֆին, տեր թողիկներին կամ ողորմելի լալային էջմիածնի միաբաններից պղծվելը նկատելով, ահագին գործ է կատարել մեր աչքում, զգաստացնելով դորանց և հրապարակ հանելով դորանց գործերը: Րաֆֆու գրությունները պակասություններ ունեն, բայց ամեն բան յուր սկզբում պակասավոր է, սակայն անուրանալի է և այն ֆակտոր, որ նա առաջինն է եղել իսկ ռոմանտիստ: Նա ունի գեղեցիկ տիպարներ, Մլեհի նման հայկական հերոսներ և այլն, և հենց սրանց համար արժանի է տոնախմբության:

Սիմեոնից² ստացա նամակ, ուր նա վկայում է ինձ յուր և յուր ամուսնու սերը, և ասում է, որ գրքերս այրվել են ներսիսյանի խանութում հրդեհի ժամանակ: Զարմանալի հանգամանքների հանդիպումն: Շատ ուրախ եմ, որ ընտրությունդ իմ ոտանավորների վերաբերմամբ հաջողակ է. և դու կարծեմ՝ առաջինն ես, որ հասարակ ընթացքից սովորությունից շեղվելով ձեռնարկում ես ասել ոտանավորներս: Ոչինչ չես գրում պ. Ճիվուլեգյանի մասին: Մենք միմյանց շատ սիրեցինք... Խալիպյանը³ ինձ այցելություն է արել, բայց ես նորան չեմ տեսել...

Մնամ սիրող քեզ՝ Ս. Շահազիզ

1 Շահազիզ Երվանդ (1856—1951)—անվանի բանասեր, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, Սմբատ Շահազիզի եղբոր որդին: Գրել է մի շարք պատմաբանասիրական ուսումնասիրություններ Խ. Աբովյանի, Միք. Նալբանդյանի, Սմբ. Շահազիզի, Գ. Սունդուկյանի, Մ. էմինի, Ռ. Պատկանյանի և ուրիշների մասին:

2 Սիմեոն—Սմբ. Շահազիզի ազգականը:

3 Խալիպյան Հարություն (1790—1871)—նորնախիչկանցի վաճառական, եղել է նոր նախիչկանի քաղաքապետ: Մ. Նալբանդյանի և Գ. Պատկանյանի հակառակորդներից, 1858 թ. Թեոդոսիայում հիմնել է Խալիպյան վարժարանը:

5

7 մայիսի 1888, Թիֆլիզ

Սիրելի Երվանդ

Սիրով ողջունելով ձեզ բոլորիդ, ցանկանում եմ լինել ձեզ երջանիկ և բախտավոր այնքան, որքան հնարավոր է մահկանացուներիս այս տրտմության հովտում: Հավաստի լինելով, որ ճանապարհորդության մեջ կարոտ պիտի լինես ավելորդ ծախսերի, էմանվել Պոպովի ձեռքով փոխադրեցի այդտեղ Ռոստով 250 ռուբլի:

Հայոց Կրեսոսը¹ մեռավ և ես, որ երբեք ոտք չէի դրած նրա տունը, ստիպվեցա երկու պսակ դնել նորա վերա, որպես ներկայացուցիչ Գայանայան և Մարիամյան կանանց դպրոցների: Բայց Րաֆֆիի մահը մեծ բարոյական հարված պատճառեց ինձ որպես նորա վաստակները սիրողի և նորա վարկը խոստովանողի:

Մնամ սիրող՝ Ս. Շահազիզ

1 Խոսքը Րաֆֆու մասին է (1835—1888):

6

29 մարտի, <1893>, Մոսկվա

Սիրելի Պերե՛

Ստացա մեր հայրենակից Շահազիզի² և քո դիրքը: Զգիտեմ, ինչ գրեմ իմ հայրենակցիս. ինչ և գրեմ, նա պիտի վերագրե իմ անտարբերության կամ չը-

կամեցողության: Բայց հավատացնում եմ Ձեզ, որ անցյալ տարվա իմ հարաբերությունները պաշտոնակիցներիս և հասարակության հետ այնպիսի ընթացք են ստացել, որ ես անկարող եմ օգնել: Համարյա այս բոլորիս տասնաչափ խնդիր կա այդ կողմերից, որոնցից ոչ մեկը չկարողացա կատարել, այդ պատճառով և բացասական գրեցի: Ներեցեք, որ այժմ նույն պատասխանն եմ պրում Ձեզ: Այսպես հրաժարվեցա և Սարիբեգի³ որդուց:

Հոգով չափ ուրախ եմ, որ վերջապես գործդ գլուխ ես բերել և անհամբեր սպասում եմ դորան:

Այս քանի օրերս ես մտադիր եմ ուղարկել քեզ, որպես և շատերին, իմ «Հոբելյանի տարեդարձը»⁴, պատկերազարդ, որի մասին ոչինչ չխնայեցի, միայն թե վայելուչ լինի, հինգ թերթը տպագրված նստել է 800 մանեթ: Գիրքը, կարծում եմ, պետք է լինի հետաքրքրական, որն ըստ ամենայնի ունի պարզել իմ հայացքս հասարակաց հարցերի վերաբերությամբ, թեև անողորմ ցենզուրան սարսափ բերեց վրաս և խուզեց շատ տեղեր: Այդ գրքի մեջ կա համառոտ նկարագիր և քո գործունեության, որ պիտի լիներ դեռ անցյալ տարին, բայց պեսպես հանգամանքներ արգելք եղան, որ և կտեսնես «Հոբելյանական տարեդարձություններիս» մեջ:

Հոբելյանիս տարեդարձին ես կամեցա պատվասիրել գեթ մի աննշան բանով մեր գրականության երկու վետերաններին. քեզ և Աղայանցին: Սորա համար այս օրերս պատրաստ կլինի քո սեփական, որ բաղկանում է գեղեցիկ արծաթե անոթներից, 1) սրժաթի ափսե, արծաթի բաժակակալ բաժակով, արծաթի ոսկեջուր թաս իր բաժակակալով տիկնոջդ համար. արծաթի շաքարաման աքցանով և վեց հատ գտալ: Մոցա բոլորի վերա քանդակած են ձեր ազգանունները: Աղայանցին ուղարկում եմ պորտսիգար էմալով ծածկված: Ես մտածում եմ, որ այս իմ շնչին նվերը կընդունես սիրով և ընկերական մրտերմությամբ:

Մնամ սիրող քեզ՝ Սմբատ Շահազիզ

Գիրքը նվիրված է վաղամեռիկ ընկերիս՝ Մ. Սաղաթյանցին⁵, որի պատկերը դրված է գրքի մեջ: Տպված գիրքը ուղարկել եմ ցենզուրի կոմիտեին և մի փոքր երկյուղ ունիմ դորանից, որովհետև տողեր եմ ավելացրել: Մոռացա ասել քեզ, «Զոհեր» ոտանավորս մոտ 100 տողի սահմաններում խուլած է և մնում է միայն 20 տող:

1 Պոռչյան Պերճ (1837—1907)—հայ գրականության դասական, անվանի վիպասան և մանկավարժ: Սմբ. Շահազիզի հայրենակիցը, նրա մտերիմը:

2 Խոսքը Երվանդ Շահազիզի մասին է:

3 Շահազիզը բազմաձև տոհմի զավակ էր, նրա եղբայրներն ու եղբորորդիները հաճախ էին դիմում Ս. Շահազիզի օգնությանը: Սարիբեկը նրա եղբոր որդին էր:

4 Սմբ. Շահազիզի մանկավարժական գործունեության 30-ամյակի առթիվ Մոսկվայում 1893 թ. լույս տեսավ «Հոբելյանի տարեդարձը» գրքույկը, որի մի քանի օրինակները Շահազիզը նվիրել է իր մտերիմ բարեկամներին:

5 Սաղաթյան Մանուկ (1840—1866)—բանաստեղծ, թարգմանիչ, Սմբ. Շահազիզի մտերիմ ընկերը: Աշխատակցել է «Հյուսիսսիային», որի 1853—1864 թթ. համարներում լույս է տեսել լեռնոնտովի «Դեր» նրա թարգմանությամբ:

Սիրելի Նովանդ

Ստացա նամակդ և հոգով չափ ուրախացա, որ բոլորդ ողջ եք։ Ոչ սակավ ուրախություն պատճառեց նոր աշխատությունդ. այդ տեսակ պատմական և գրականական աշխատությունները, նոր լույս ծավալելով անցած կյանքի վերա, կարող են լինել օգտակար ազգային վերածնության։ «Նախարար և նախարարություն» գործդ երկու ընդարձակ հոդվածներով հրատարակած հետաքրքրական է յուր սկզբնավորությամբ և բավական ամփոփ և կոմպակտ երկասիրություն է և իր տեսակում առաջինը, որի մի քանի կետերը կարելի է համարել թեական և ենթադրական, բայց այնուամենայնիվ կրող յուր մեջ կշիռ և արժանապատվություն։

Իմ «Նոր քնարի» մասին ավելորդ է խոսել, որովհետև դա մի ժամանակավոր բռնկումն էր, որ հարատև չէ կարող լինել. այդ պատճառով դորա նոր ոտանավորների մինում ասված է.

Առանց նորան. և խնդագին
Փայփայելով, լավ մաքրեցի.
Կարծեմ լարերը պակաս էին,
Բայց տակավին դեռ արծաթի.
Եվ արծաթի տարեդարձին
Այս տողերը ինձ հնչեցին. և այլն։

Եվ եթե ցանկալի է քեզ իմանալ, ահա սոքա են «Նոր քնարիս» արդյունքը.

1 «Հանգած քնար»

2 Տեր-Հակոբյանցի քսանհինգամյա հարսանյաց տարեդարձին

3 Ուղերձ նույն տարեդարձին՝ երեխաներին

4 «Անգին գոհար»

5 «Պանտուխտ հոգի»

6 «Բանաստեղծի դամբանին»

7 «Զոհեր» (86 տող)

Կաթողիկոսը միանգամայն անժամանակ վախճանվեց. քեզ հայտնի է, որ ուսաց կառավարությունը կազմել է մի մասնաժողով, որի նյութն է «կանոնավորել հայկական հայրապետի (կարդա եկեղեցու) հարաբերությունները դեպի ուսական կառավարությունը». և միտ ղնելով կայսրության տրամադրության ներկայումս, միայն անմխիթար եզրակացության կարելի է գալ։

Սիրով ողջունում եմ Թելլու հարսին և սիրելի Հեղինե տիկնոջդ։

Մնամ սիրող քեզ Ա. Շահազիզ

Սիրելի Նովանդ

Մեզ ասում են, որ մարդկությունը առաջադիմում է, որ լույսը հաղթում է խավարին, որ սոցիալ կյանքի տղեղությունները կրթության միջնորդությամբ վերանում են, որ հումանիզմը հսկայական քայլեր է անում և ազգությունները,

դուրս գալով յուրյանց նեղ շրջանից, մտնում են ընդհանուր մարդկության հանդիսարանը եղբայրության անունով: Այս բոլորը այսպես է լինում, երբ ոչ ոք մեր շահերին չի դիպչում և մենք, հանգիստ մեր տանը նստած, զարմանալի մարդասեր ենք և քաղաքավարի. բայց հենց որ մեր ինտերեսը սակավ վտանգավոր է, այն բոլոր դավանած ճշմարտությունները ստի նման ցնդում են վեր: Եվ մարդս փոխվում է գազանի յուր բոլոր անասնական բնազդներով: Ահա այս վիճակի մեջ է և այժմյան եվրոպական մարդկությունը: Սորանով միայն կարելի է մեկնել այն անարժան սառնասրտությունը, որ այս րոպեին մեր աշխարհը փոխվել է արյան դաշտի և շնաբերան հրապարակախոսները,— չեմ ասում դիպլոմատները, որոնց միշտ վայել է շնաբերան լինել,— մի նորմալ երևույթ են համարում, որ արդարանում է միջազգային մրցումներով ու քաղաքագիտությամբ:

Այժմ ոչ ոքի համար այլևս գաղտնիք չէ, թե 6 մեծամեծ տերություններից որը ավելի նպաստում է և քաջալերում հայոց կոտորածներին թուրքիայում: Տերությունը, որ իրան համարում է միայն ամենաքրիստոնյա և կատարող սիրո պատվերները, հանդիսանում է որպես վանդալ և խաբեբա: Ով բարք, ով ժամանակ:—

Այժմ գալով գրական գործերիդ ես առաջագույն հայտնում եմ շնորհակալությունս մեր սիրելի Հեղինեն¹, որ նա կամենում է ուղարկել ինձ իր երախայրիքը: Գրում եմ քեզ մտերմաբար, որ քո հանգուցյալ Պատկանյանին վերաբերյալ շարադրությունը գուցե անժամանակ լինի հրատարակել: Դեռ շատ ժամանակ չէ որ հեղինակը վախճանվել է. հրապարակ հանել դորա թերությունները, որ գուցե դեռ շատ պարագաներով պարզված չեն, լավ տպավորություն չեն կարող բերել ժամանակակից սերնդի վրա և ավելի կարող են շարժել կուսակցական ոգին, մանավանդ, որ ներկայումս հայրենիքի դաշտերը ծածկված են նահատակներով, որոնց երգել է հանգուցյալը և որպես ասացի կարող է ծանր տպավորություն պատճառել: Կարծում եմ այս մտադրությունները աչքի առաջ ունենալով, բարվոք է հետաձգել և սպասել ժամանակի:

Մնամ սիրող Ս. Շահադիդ

1 Շահադիդյան Հեղինե—Երվանդ Շահադիդի կինը: Լինելով ժամանակի կրթված կանանցից մեկը՝ դրադվել է գրականությամբ, հավաքել և կազմել է միջնադարյան տաղերի ժողովածու (ձեռագիր վիճակում): Թարգմանել է Մոպսսանի «Հայրասպանը» և «Հուդայի վերջին գիշերը» գործերը: Ռոստոմով մասնակցել է Պ. Աղամյանի հյուրախաղերին և հանդես եկել Օֆելյայի դերում:

Սիրելի Երվանդ

[...] Պարոն հալաթյանի եզրակացությունները Գլակի¹ մասին քեզ չպիտի վարմացնեն: Ներկա ժամանակներում ով ուզում է մի բան գրել, իսկույն սկսում է հերքումից. այդ նոր հայագիտների և հայ ազգագրագետների սիրելի թեման է: Նալբանդյանի կենսագրության² մասին կարող եմ ասել, որ հազիվ թե այդ քեզ հաջողվի աշխարհ հանել, ցենզուրան Պորկեյի մկրատը ձեռին դերազանցել է ամենահմուտ չորանից. այնպես հստակ ու թամուզ է խուզում,

որ մինչև անգամ և կաշին է քերթում: Այս հիման վրա, կարծեմ, արգելվել է այս քանի օրերում «Հայոց բելլետրիստների»³ երկրորդ հատորը:

«Նոր դարի» հոբելյանի հեռագիրս ես տվի ակամա, միայն հայկական գրականության սիրո հուսով: Եվրոպաբար շափել ու կշռել մեր մտավոր վաստակների արժեքը՝ շատ դժվար է. միտ դնելով մեր ազդի դրության, մենք ստիպված ենք լինում շատ բան ընդունել, ինչ որ Եվրոպայի մեջ հերքում ենք: Եկեղեցին եկեղեցականներով, որ Եվրոպական գիտությունների մեջ շատ սակավ տեղ է բռնում, մենք հարկադրված ենք, անդադար հիշել գորանց, իմանալ հավատաբանական զանգվածները հստակ նրա համար միայն, որ դա կամ դոքա ունին ազգի մեջ իշխանական ազդեցություն: Հայ գիտնականները պետք է լինեն և եկեղեցու գիտնականներ:

Արդեն հեռագրներից ու օրագրներից իմացած կլինես այն զգալի կորուստի մասին, որ ունեցավ տեղիս հասարակությունը. այդ է Ներսիսյանի⁴ մահը: Բնությունից զարդարված գեղեցիկ հատկություններով և գլխավորապես մտավոր կարողությամբ, հանգուցյալը գրավել էր շատերիս համակրությունը: Նա մասնագիտությամբ պատկանելով օտար շրջանի և ինտերեսների, պահել էր կենդանի և յուր բնածին ֆիզիոլոգիական ծագումը և շատ գերազանց էր յուր կարգի հայերից, որոնց համար չկար հայրենիք և ազգություն: Սակայն Ներսիսյանը յուր բնական ձիրքերի հետ չէր ստացել մի հաստատուն ու վճռողական կամք. սորա համար նա հաճախակի կամենալով երկու ևս ներհակ կողմերը շահել, վերջի վերջո ընկնում էր 2 աթոռի արանքը և սկսած գործը մնում էր անորոշ: Ինչևիցե, ցավալի է, որ մի այդպիսի մարդ տակավին անժամանակ դնաց այս աշխարհից:

Այսպես, սիրելի Շրվանդ, վերջացնելով նամակս ցանկանում եմ քեզ քո մտավոր աշխատություններին հաջողություն:

Սիրող քեզ Ս. Շահագիր

1 Խոսքը Գր. Խալաթյանի հրատարակած «Ջենոբ Գլակ» համեմատական ուսումնասիրության մասին է, որը տպագրվել է «Հանգես ամսօրյա» պարբերականում, առանձին գրքով՝ 1899-ին Վիեննայում:

2 Նրվանդ Շահագիրի «Միքայել Ղազարյան Նալբանդյան» կենսագրականը տպագրվել է նախ «Հանգես գրականական և պատմականի» 7-րդ գրքում (1896), ապա՝ 1897-ին Մոսկվայում, առանձին գրքով:

3 «Армянские беллетристы» ժողովածուի Ա հատորը լույս է տեսել 1893 թ. Մոսկվայում. ուր զետեղված են Խ. Աբովյանի, Պ. Պոռշյանի, Բաֆֆու, Ռ. Պատկանյանի, Մերենցի, Ղ. Աղայանի գործերն ու կենսագրությունները: 1894 թ. տպագրվում է ժողովածուի երկրորդ հատորը, սակայն արգելվում է տարածումը, բռնագրավվում է ամբողջ տպաքանակը, փրկվում է ընդամենը մի քանի օրինակ:

4 Խոսքը Մոսկվայի համալսարանի առևտրի իրավունքի պրոֆեսոր Ներսես Հովսեփի Ներսիսյանի մասին է:

Սիրելի Նրվանդ

Շարադրությունդ Նալբանդյանի մասին Մկրտիչը¹ ստացել է և ինձ ասաց, որ մի մեծապարունակ և բարեխիղճ գրվածք է: Հոգով չափ ուրախ եմ, որ աշխարհիս հոգսերի մեջ դու կարողանում ես գրական գործերով զբաղվել և դո-

ցանում գտնել սփոփանք, այո և ուրախություն: Յանկանում եմ, որ այդ աղ-
րյուրը երբեք չսպառվի քո մեջ և մերթ ընդ մերթ մաքրաջրով արբուցանես
հայրենի անդաստանը:

Սասունի արյունաշաղախ ընդհարումները, անտարակույս, պատճառում
են հասարակաց կսկիծ ու դառնություն, բայց ի՞նչ կարող է անել ներկայումս
մի անպաշտպան ժողովուրդ, ցիրուցան շորացած տերևների նման: Ի՞նչ պիտի
անեն Սասունցիք կանոնավոր զորքի, թնդանոթների և ուրիշ տակտիկական
միջոցների դեմ: Եվ չեմ կարծում, որ մեր ազգը մի կարևոր էական բան գլուխ
բերե այն խեղճերի համար: Մարդասիրությունը ոչինչ է պոլիտիկայի առջև:
Իսկ արջի պոլիտիկան այնպես է, որ յուր փրկարար թաթը դնի տկարի վրա,
երբ կգա ժամանակը:

Ֆոնդը², որ դուք հաստատում եք, կլինի մի պատվական փարոս, որով
Նախիջևանը քավել կարող է յուր մեղքերը և բարձրագլուխ հանդիսանալ յուր
մյուս հայրենակիցների համար: Նամակս վերջացնելով, ցանկանում եմ քեզ և
քոյիններին աջողություն և իմ ջերմ բարևներիս հետ ուղարկում եմ ջերմ համ-
րյուրներ:

Սիրող քեզ Ս. Շահազիզ

1 Խոսքը «Հանգես գրականական և պատմական»-ի խմբագիր Մկրտիչ Բարխուդարյանի
(1862—1896) մասին է:

2 Համիզյան ջարդերից հետո Արևմտյան Հայաստանում հազարավոր երեխաներ մնացին
որք ու անապաստան: Ստեղծվում է հատուկ որբասինամ մի մարմին Շահազիզի ղեկավարու-
թյամբ: Մոսկվայի հայ հասարակությունը առաջարկում է Շահազիզին մեկնել Կոստանդնու-
պոլիս՝ տեղում զբաղվել որբերի հարցով: Առողջական վիճակի պատճառով այդ առաջնու-
թյունը տեղի չի ունենում: 1898 թ. դեկտեմբերի 25-ին նա դրում է «Օգնեցեք» սրտաուռ բա-
նաստեղծությունը, այն տպագրում նամակի թղթի վրա և որպես նամակներ տարածում հայ
հասարակության մեջ:

11

15 հունիսի <1896>, Մոսկվա

Սիրելի Երվանդ

Քեզ արդեն այստեղից ուղարկել եմ նամակ Նախիջևան, կարծեմ մոտ
31 մայիսի: Երեւի այդ իսկ միջոցին գնացած լինեք ձեր ներկա ամառանոցը:
Այնտեղ գրել էի, որ Ստեփանը² մայիսի վերջին պիտի մտնեք ձեր քաղաքը
և անձամբ հետդ տեսնվեք, կամ լավ է ասել, տեսակցեք: Թե ինչ եղավ,—
չգիտեմ: Իսկ Մկրտչի³ հետ, ասածդ կշռելով, ավելորդ համարեցի խոսել քո
գործի մասին: Ուրախ եմ, որ այժմ գոնե առաջին նամակս չես ստացել, ո-
րով հետևե, միտ դնելով քո բարոյական ամպերին, որով պաշարված ես ներ-
կայումս, կան այնտեղ և իմ ամպերը, որոնց հետևանքը մինչև այսօր շարու-
նակվում են, բայց այդ բոլորը տանելի է, որովհետև նյութական են. ինչ
և ասես, էլի պիտի մտնես մեյդան և գործես, այնտեղ միայն բաղուկներդ
կամրանան, ապա կսրբեն ասպարեղդ փուլերից: Հասակդ քեզ տալիս է այդ
բարոյական առաքինության ուժերը՝ և՛ փափուկ, և՛ թարմ, և՛ մտավոր: Ոչ,
տակավին հարկավոր չէ վհատել:

Առաջին նամակումս իմիջիայլոց գրած էի, թե այժմ ես կարդում եմ Խա-
լաթյանցի գործը Մովսես Խորենացու⁴ մասին և տեսնում եմ, որ ունի արժա-
նավորություն: Արժանավորությունը նրանում է, որ բոլոր Խորենացու մասին
հրատարակված գրականությունը, այսինքն այլևայլ, թե՛ տոհմային, թե՛

օտար թարգմանիչների ու կրիտիկական հոգվածների շրջանակը հավաքած-ամփոփած ի մի, երբեմն և ինքնուրույն դատողություններով ու լուսաբանություններով: Սակայն պ. Խալաթյանցի նոր աշխատության հիմնադիրը, եթե կարելի է ասել քարտաշը, է Գարագաշյանի՝ «Քննական պատմություն հայոց», որը և քեզ ծանոթ պիտի լինի: Այս գրքի ոգին, ուղղությունը, նրբազնին վարիանտները ծառայում են պարոնին որպես հիմնադրի կշռող և չափող թել կամ լար:

Ապա առաջ են գալիս անցյալ և ներկա դարերիս արմենիստների կարծիքները, ինչպես եղբ. Վիստոնների, Քատրմերի և վերջապես Հակրոդի և Կարիերի և այլն: Թե հորենացու անձը և նորա հեղինակությունները առհասարակ պատած միգով և այդ պատճառով գուշակելի և խորհրդավոր են,— այդ անտարակույս է, բայց թե եղել է մեզ համար մի անհայտ աղբյուր կամ գրավոր ավանդությունների շարքը,— այդ էլ անտարակույս է: Այդ բոլորը երևում է հորենացու և ոճից, և միայն նորանից հաղորդած առաջին առասպելական նահապետների կյանքից: Երևակայիր, որ նորա տված անուններից հին նահապետներեն ոչ մինը չի երևում մեր ազգի պատմության առաջին դարերում: Բայց արդարև ես միայն մի տեղ նկատում եմ Արամե անունը և այդ հայտնի է (եթե միայն ընթերցանությունը ուղիղ է) Ասորեստանի բեռագիրներից, ուր 841 ն[ախ] ք[ան] մեր դարագլուխը Սալմանասար գնաց-արշավեց ուրարտացիների վրա և հարվածեց նոցա թագավորին՝ Արամե: Ինչևիցե. սոցա-նոցա նմաններին, երևի, և դու մասամբ տեղյակ ես: Խալաթյանցը և կամ ուրիշները շատ տեղերում հասնում են ծայրահեղության, զոր. մի կտոր հանեմ նորա շարադրությունից և դնեմ տառից հորենացու հատվածը Տորքի մասին քննելով և գալով այնտեղին, որ ասում է «Եվ գրել նույնպես ըղընգամբբ իւրովք արծուիս և այլս այսպիսի,— «Из них (из подвигов) первый, по моему мнению, совершенно несообразен, так как «начертание ногтями на гранитных плитах орлов и тому подобное» предполагает в исполине известную степень культуры, знакомство с искусством, что совсем не к лицу такому чудовищному уроду, каков «Торк»!

Մեկը հարցնի. տո տնաքանդ, խո այստեղ շեշտը կամ խոսքը կուլտուրայի կամ գեղարվեստի վերա չէ, այլ եղունգների ֆիզիկական ույժի հզորության, ինչպես մի փոքր վերը ասած ձեռքի համար, որ «բուռն հարկանել նմա գործել վիմաց ձեռք և ճեղքել ըստ կամաց մեծ ու փոքր»:

Բայց դու այդ գործի ճաշակը կառնես, երբ որ կարդաս: Բայց որ նորա առջև շմեղանչես, նախ պիտի կարդաս Գարագաշյանը: Գարագաշյանի քննական պատմությունը արդարև պիտի մի պատվավոր տեղ բռնի մեր նոր գրականության մեջ: Նորա փորձառու գրիչը, նորա լուսավոր աշխարհազննությունը շատերի համար շատ բան է պարզում մեր անցյալի կյանքից և տալիս է մի ընդհանուր նկարագիր մեր սոցիալական կազմակերպության, վերլուծելով և համակարգելով այդ կազմակերպության պայմանները համաձայն այժմյան և վրոպական գիտության: Բայց երբեմն այնպիսի աննպաստ պահանջմունքներ է անում անցյալ կյանքից և առհասարակ այն դարերի ուղղությունից, որ իմ կարծիքով, իրավունք չունի: Բավական կլինի դորա համար քեզ մի օրիկակ բերեմ: Խոսելով հորենացու կեղծիքի մասին, վերաբերյալ մարաբասյան աղբյուրներին, նա ասում է. «Հեղինակ մարաբասյան պատմության, որպես նինվեի և սեմական լեզվաց դպրության, նույնպես մարդկային ազգին ծագ-

ման, հնության, բաժանման և լեղվաց բաժանման անտեղյակ կթվի: (Եվ զարմանալի է, որ տեղյակ լինե՞ր) ... Նույնպես չգիտնալով, թե ազգերը լեզվավ և տեղյակ ուրույն և տարբեր բուներու ճյուղեր են, որոնց սկիզբը նախապատմական է, կկարծե թե հնդեվրոպական բունին վերաբերյալ ճյուղ մը՝ որպիսին են Հայք, յուր գետնեն գուրս և յուր բունեն զատված, իբր թե ինքնորեն առաջ եկած էր Բաբելոն, բոլորովին օտար և տարբեր բունո մը ճյուղին վրա: Նույնպես ենթադրելով, թե բոլոր մարդկային ազգը կգտնվե՞ր՝ Բաբելոն երկիրը Սինար, երկարաբերձ աշտարակ մի շինելու զբաղյալ, կը կարծե թե այն ժամանակ, այսինքն իբր 2240 տարի առաջը [ն. քր.] Հայաստանի կողմերը և անտի այդ բոլոր երկիրը Հյուսիս ամալի և անիծած էր» և այլն: Եվ հետո ինքը իսկույն ավելացնում է. «Այս պատմությունը կամ մանավանդ ենթադրությունը, անցյալ դարերու մեջ կրցավ իբրև ճշմարիտ կամ գեթ իբրև հավանական ընդունվել. բայց զարդիս, մանավանդ ի վերջին 15 կամ 20 ամաց ի՞թե դրական գիտությունք զծագմանե, զհնությունե և զբաժանմանց մարդկային ազգին այնպիսի և այնչափ լույս տված են, որ այս խնդրո վրա հին վարդապետությանց կամ կարծեաց շատերը, եթե ոչ բոլորովին ձգված, գեթ մեծապես փոխված կամ չափավորած են»:

Թե եթե այս բոլորը այսպես է, ինչպես կարելի է պահանջել, որ այդ բոլոր նորանոր գյուտերը, որ այն ժամանակ տակավին գյուտեր չէին, այն հին մարդիկը իմանային:

Սույնպես ոչ ամենևին հոգեկան է, ասեմ և բարոյական, նորա եզրակացությունը Վարդանյան և Վասակյան կուսակցությունների մասին: Նա ասում է, որքան Վարդանը գաղափարական էր, ցանկացող միայն մարտիրոսության, նույնքան Վասակը աշխարհագետ էր, քաղաքագետ և դիպլոմատ ներկա մըտքով: Վասակը իմանալով, որ տկար հայոց ուժով միայն չի կարող կամ չեն կարող ընդդիմանալ Պարսից ահագին զորության, համերաշխ չէր Վարդանանց հետ, զանազան միջոցների էր դիմում նրանց ապստամբությունը չափավորելու և ազգի ընդհանուր փրկությունը հայթայթելու: Այդ բոլորը լավ է. և մենք ընդունում ենք նորան հանճարեղ և հեռատես մարդ: Բայց ինչ ասենք նորան, ինչպես հասկանանք բուն հայրենասիրական և առաքինության զգացմունքը, երբոր նույն ինքը Վասակը դեմ հանդիման կանգնեց յուր հայրենակիցներին և նույն վերջին բախտավճիռ կովին Ավարայրի դաշտում, սկսավ միացյալ նախարարների զորքով նետածիգ լինել տիրազանց թավալել գետնին յուր հայրենակիցներին: Այս էլ հեռատեսություն էր:

Բայց Գարագաշյանի գիրքը ըստ ամենայնի է պատվական և գեղեցիկ սնունդ կարող է մատակարարել մեր ազգին:

Եթե հանկարծ թևեր առնեիք ու թռչեիք այս կողմերը, չէիք հավատալ, որ խրիմում եք, այնքան փոխվել է այս ամառ եղածը: Զերմաշափը մինչև այսօր ցույց է տալիս ոչ ավելի քան 20, 22,— իսկ ծանրաշափի սլաքը բոլոր ժամանակ համարյա անշարժ ուղղված է դեպի ծայրը փոփոխականի: Գիշերները դով է: Պառկում եմ փակ լուսամուտներով, իսկ օրերով կամ հեղեղում է կամ մաղում է անձրև: Երևի ձեր նոր ամառանոցում ավելի տաք է քան թե այստեղ: Զարմանալի է, որ այստեղ հիվանդությունս ավելի է նեղում, քան թե Մոսկվայում. այդ շատ բնական է. այնտեղ սեղանս կանոնավոր է, ամոքիչ կերակուրները և ընդեղենը ու բանջարեղենը անպակաս: Սրանց պետք է վերագրել

ստամոքսիս դրութիւննր: Թե՛ն այս նշույլալ անխուսափելի հիվանդութիւննս շը-
լիններ, կատարյալ առողջ կլինենի:

Ուրեմն մնաք բարով: Սիրո ողջույնս մատուցանես սիրեցյալ Հեղինէին:

Սիրող քեզ Ս. Շահագիզ

1 Նամակը անթվակիր է. այն վերականգնել ենք Գր. Խալաթյանի գրքի տպագրության տա-
րեթով:

2 Տե՛ս 10-րդ նամակի երկրորդ ծանոթագրութիւննր:

3 Խոսքը Մկրտիչ Բարխուդարյանի մասին է:

4 Խոսքը Գր. Խալաթյանի «Հայկական վեպը Մովսես Խորենացու պատմության մեջ» (Մի
փորձ քննադատական ուսումնասիրության: Թարգմանութիւնն ուսերենից) գրքի մասին է, որ
լույս է տեսել 1896 թ.:

5 Գարագաշյան Մաղաթիա (Անտոն, 1818—1913)—պատմաբան, լեզվաբան, փիլիսոփա:
Թողել է հարուստ գիտական ժառանգութիւն:

Սիրելի Երվանդ

Ստացա նամակդ, երով հայտնում ես քո ուրախութիւնը, և քո երախտա-
գիտական զգացմունքը այն առթիվ, որ իմ նախկին աշակերտները կամեցան
պատվասիրել իմ 35-ամյա՝ գործունեութիւննր: Ավելորդ է ասել, որ դու քո
զգացմունքները արտահայտած լինես ազգակցական սնապարծության համար:
Այդ սնապարծութիւնը մի ուսյալ և կրթված մարդու աչքում, անտարակույս,
ոչ մի արժեք չպիտի ունենա, իսկ հատուկ քեզ համար այդ տեսակ զգացմունք-
ները վաղուց արդեն անցել են, մարդուս արժանապատվութիւնը գնահատել
ըստ էության և ոչ ազգակցության: Շատ շնորհակալ եմ քեզանից:

Երկար ճառեր խոսեցին, խոսեց երկար և պ. Մամիկոնյանը², ասպա կար-
դացին ուղերձը, որին պատասխանեցի այնպես երկար, դիպչելով կամ շոշա-
փելով բոլոր առօրեական հարցերը, որ իմ կարծիքով, նշանակութիւն պիտի
ունենային ուսանողների համար պրակտիկական կյանքում: Ես, իմիջիայլոց
ասացի. «Ես շտապում եմ այդ մտածումները անելու, որովհետեւ զգում եմ, որ
գարնան ջերմութիւնը հովանում է իմ երակներում, վրա է գալիս ձմեռային
բուքը և կաշկանդում գործող ուժերը»:

Ծառուրյանը այս քանի օրերս խնդրեց և՛ ուղերձը, և՛ իմ պատասխանը,
որ ուղարկի «Մուրճին» տպելու³, թե ինչպես կտպագրվի կամ խմբագրության
կողմից կամ ցենզորի հայտնի բան է, դժվար է ասել: Տեղեր ու տողեր կան,
որ խմբագրութիւնը կփոփոխե ըստ յուր տրամադրության և տեղեր կան, որ
ցենզորը կջնջե ըստ յուր իմաստության: Կսպասենք:—

Շնորհավոր ձեր դատիկը: Համբույրներով ձեզ, մնամ սիրող

Ս. Շահագիզ

1 1897 թ. Լազարյան ճեմարանի սաների նախաձեռնությամբ նշվում է Սմբատ Շահագիզի
մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանը: Երվանդ Շահագիզի ակնարկը այդ մա-
սին է:

2 Մամիկոնյան Ստեփան (1859—1921)—Լազարյան ճեմարանի սաներից, կրթությամբ
իրավաբան:

3 Ալեքսանդր Ծատուրյանի խմբագրությամբ 1898 թ. Մոսկվայում լույս տեսավ Ս. Շահադիդին նվիրված հարելյանական գրքույկը՝ «Երեսուն և հինգ տարի (1862—1897)» վերնագրով:

13

24 օգոստոս <1897>, Մոսկվա

Սիրելի Նովանդ

Էմինը՝ մի պաղարյուն և սառնասիրտ մարդ էր. նա կարծես թե ծանոթ չէր ղզացմունքների աշխարհի հետ. նա, կարելի է ասել, ավելի ղզում էր խելքով, քան թե սրտով: Այս պատճառով էլ միշտ ծանրաբարո և անհաղորդ երևալով՝ յուր աշակերտներին ահ ու երկյուղ է ազդում, քան թե սեր ու համակրություն, մի հատկություն, որ մանկավարժության ասպարեզում չի կարող լինել այնքան բեղմնավոր ու նպատակահարմար: Էմինի մասին առհասարակ ասում են, որ նա յուր տեսչության ժամանակ եղել է բյուրոկրատ կամ ֆորմալիստ, բայց այդ ուղիղ չէ: Մի այդպիսի կարծիք առաջացել է նորա բնավորության հիշյալ զանգվածից, որ ամեն տեղ ու ամենից գիտե խստիվ պահանջել կարգապահություն և մի շնչին զանցառությունը, որ այնքան սեփական է մանուկ սերնդի հարափոփոխ երևույթներին, ենթարկվում է երբեմն անարժան պատիժների: Այսպիսի դեպքեր շատ են պատահել Էմինի վարչության շրջաններում:

Էմինի սառնությունը դեպի նազարյանցը ծագել է նրանց գրականական հակառակ ուղղությունից: Էմինը ինչպես և նորա ժամանակակից ուսումնականները, հին լեզվի ներկայացուցիչ լինելով, մտածում էին, որ այդ լեզուն անձեռնամխելի է, պիտի մնա լուսավորության գործի, դպրոցների միակ լեզուն:

Նազարյանցը, զրահավորված ժամանակի ուժով, ամենևին հակառակն էր պնդում, որ մեզ բոլորիս հայտնի է: Բայց այդ հակառակության վերաբերությամբ մեզ մի բան պիտի պարզել:—Էմինին շատ լավ հայտնի էր ազգերի լեզվական պատմությունը: Համարյա նորա օրերով էր վերջացել այն հին և նոր լեզվի պատերազմը ողուաց գրականության մեջ, նորի հաղթությամբ: Նա ինքն էլ խոստովանում էր կարամզինյանների ռեալական ճշմարտությունը: Սակայն նույն Էմինը անհասկանալի համառությամբ պաշտպանում էր հնի իշխանությունը, երբ որ խոսքը գալիս էր հայոց լեզվին: Ես կարծում եմ, որ մի խելոք և առողջամիտ մարդ, ինչպիսին էմինն էր, չէր կարող չհամոզվել, որ նազարյանցի ասածը մի տարրական ճշմարտություն էր. ապա ինչու նա այնքան անհաշտ էր նազարյանցի հետ: Թեև տրադիցիաներն էլ մեծ դեր են խաղում մեր գործերի մեջ, բայց, իմ կարծիքով, վերոհիշյալ հակաճառությունը բացատրելու համար պետք է դիմել մարդկային այն թուլության, որ հայտնի չափով տիրում է ամենքիս և որը թե՛ փոքր, թե՛ շատ թագուցյալ պաշտում ենք բոլորս. այդ վշտացած փառասիրության ղզացմունքն է: Էմինի ուղղությունը, կյանքից դուրս լինելով, չէր հիշվում նույն կյանքի մեջ. իսկ նազարյանցինը, կյանքի հետ լինելով, ստանում էր նրանից արձագանք, հռչակ, համակրություն: Այս իսկ փառասիրության տենչով պիտի մեկնել նույն բարոյական տագնապր, որ Էմինի պես մարդուն թելադրում էր գաղտնի և հայտնի թղթեր դրել թե՛ ճեմարանի նախկին նազարյանին [տեքստում այսպես է], թե լուսավորության միևնույնության: Բայց դու այս բանից ղզույշ կաց, նախ որ մեր ժամանակները հարմար չեն և երկրորդ, որ դոկումենտները չկան:

Եվ որովհետև հանգուցյալ էմինը, շնայած իր լրջամիտ և բազմակողմանի ուսումնականության մի այսպիսի մարգ էր, հեշտությամբ հափշտակվում էր նրանցից, որոնք կարողանում էին հարմարվել նորա հայացքների հետ, և ուրեմն, նորա սիրելին լինել: Այդ տեսակ մարգերից էր և Քանանյանը, որին արդարև լեզու տված էր նրա համար, որ ներքին տրամագրությունը ծածկե և անձնական շահերը առաջացնե: Թեև առաջին անգամից նա գրավել էր էմինին, բայց հետո, մի հայտնի ժամանակ էմինը բավական ցրտացել էր նրանից: Լիցենոնի երկրորդ բացման օրերից նորա հարաբերությունը ավելի պաշտոնական էր, քան թե մտերմական: Պաշտոնական հարաբերությունը փոխվեց համերաշխական, երբ երկուսը միասին խորիմաստ ապացույցներով կարողացան քանդել հեռատես լազարյանների կտակը և երեք-չորս համալսարանական ստեպենտիատներին (լազարյան) տեղափոխեցին նոր հաստատությունը իբրև ավելի շահավետ միջոց հայ ուսանողների համար, բայց իսկապես լիցենոնի կոնտինգենտները ավելացնելով և էմինի համար հայ լսողներ որսալով: Այս են էմինի մարդկային թուլությունները: Բայց նա ունի և շատ արժանավորություններ. նա երբեք չհափշտակվեց կաշառագործ մեծավորների ախտով, չըհափշտակվեց աշխարհիս իշխանի—փողի որոգայթից, հանապաղ անձնվեր մշակ հանդիսանալով գիտության հանդեսներում, բարեխիղճ ուսումնասիրելով մեր հին գրականությունը, որով արժանի է բոլորիս անկեղծ շնորհակալության²:

Իսկ ինչ որ վերաբերում է «Ամառնային նամակների»³ կրիտիկոսին, պետք է ասեմ, որ այդ տեսակ համբալներ մեր մեջ շատ կան. այդ մի դարմանալի բան չէ: Զարմանալի է, որ միայն Շահնազարյանները⁴, միշտ հիացած ու հափշտակված մեր գործունեությամբ, կարող են տեղ տալ այդ համբալի գործին, յուրյանց հավաքածուի մեջ: Անցյալ տարին Հովհաննես Շահնազարյանը գրել էր ինձ մի նամակ, ոգևորությամբ ու գովասանքով ներշնչված դեպի «Ամառնային նամակները» և կամենում էր գրել քննություն: Ես նույն նամակների մի քանի էջերը պարզելով, որ ինքն էր խնդրել, վերջը ավելացրի, որ շատ շնորհակալ եմ նրա համակրության համար, բայց լավ կլինի, որ նա իր քննությունը թողնի ապագա ժամանակների համար, իմ մահից հետո, երբ ավելի ազատ կարող էր խոսել: Սրանով ես կամեցա միայն զգուշացնել, որ ավելորդ հափշտակության պատճառով, ավելորդ էլ գովասանք չընծայե յուր նախկին ուսուցչի վաստակին: Այժմ ամենևին հակառակն եմ լսում: Բայց հիշյալ կրիտիկոսը յուր բերանովն է խոսում, թե՞ ուրիշի: Մինաս Բերբերյանին⁵ պատահմամբ տեսա Յալթայում, որ սիրով ողջունեց ինձ և համբուրեց:

Առողջությունս այն չէ, ինչ որ առաջ էր: Այլևս ծովում չեմ լվացվում: Մի քանի հարցերի և խնդիրների վերաբերմամբ բարոյապես էլ լավ չեմ զգում: Բրոշյուրը, որ կամենում էի տպել, կարելի է ասել, որ արգելված է:

Մնամ սիրող ձեզ Ա. Շահազիզյան

1 էմին Մկրտիչ (1815—1890)—պրոֆեսոր, հայագետ: Լազարյան ճեմարանի տեսուչ: Ծնվել է նոր Զուղայում: Սովորել է Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկվայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը:

2 Սմբատ Շահազիզի՝ Մ. էմինի մասին գրած այս բնութագրական տողերը ուղեցույց հանդիսացան և. Շահազիզի համար գրելու «Մկրտիչ Հովսեփյան էմին» աշխատությունը, որը լույս տեսավ 1900 թ.:

3 Սմբ. Շահադիդի «Ամառնային նամակները» հրատարակվել է 1897 թ. Մոսկվայում: «Եւրոճ» հանդեսում Ա. Ա. ստորագրությամբ լույս տեսավ կրախոսական այդ գրքի մասին (1897, № 7—8):

«Ամառնային նամակների» գրելու շարժառիթը հանդիսացան՝ Դր. հայաթյանի և մասամբ Գարազաշյանի աշխատությունները: Բանավեճի մտնելով հայաթյանի հետ և պաշտպանելով խորենացուն՝ նրա դեմ հարուցվող մեղադրանքներից, երբեմն դուրս գալով պատմաբանասիրական քննության սահմաններից, Շահադիդը արձարժեց ժամանակի հուղող հարցեր: Շահադիդը ձգտում էր պատմական անցյալը ծառայեցնել ներկային, կապել այն իր օրերի քաղաքական-հասարակական դեպքերի հետ:

4 Շահնազարյան Հովհաննես—բժիշկ: Սովորել է Լադարյան ճեմարսնում, բայց չի ավարտել: Զրադվել է նաև գրականությամբ: Աշխատակցել է հալ պարբերական մամուլին:

5 Տե՛ս 14-րդ նամակի առաջին ծանոթագրությունը:

14

24 նոյեմբերի <1895>, Մոսկվա

Իմ ազնիվ նախկին աշակերտ, սիրելի Մինաս՝

Ձեր նամակը անշափ ինձ ուրախացրեց. ես այն նամակից իմացա, որ դուք Ձեր ընկերակիցների համերաշխությամբ կազմել եք մտավոր մշակների մի խումբ և կամենում եք միասին գործել: Ես երբեք չեմ կասկածել, որ ճեմարանի բարի սերմերը ընկած լինեն ժեռ քարերի վրա: Արդարև, մեծ է եղել հավատս դեպի իմ սիրելի աշակերտները, մեծ է եղել հույսս, որ նոքա բարոյական պատվար կհանդիսանան ազգի մեջ և կպատասպարեն նրան ժամանակի ժանիքներից, որ է խավար տգիտություն:

Խավարն է Հային ճակատագրել

Կապույտ երկնի տակ հրանյութ շանթեր.

Եթե ոչ այսպես, պիտո է կարծել,

Հայը կփայլեր, Հայը կտիրեր... («Լեոնի վիշտը»):

Իսկ ինչ որ վերաբերում է իմ մասնակցության, ես միայն կկրկնեմ Ձեզ այն տողերը, որ մոտերումս գրեցի մի պարոնի. «Այն, ինչ որ ինձ տվել էր բնությունը՝ հանձար, տաղանդ, ընդունակություն,— թվում է ինձ, որ ձեռքիցս գնում են, և հեռու չէ ժամանակը, երբ միանգամայն կսնանկանամ»: Թող ուրեմն մանուկ սերունդը յուր թաթաղուն ու զեղուն նյութերով կենդանացնեմ եր սպառած ու ցամաքած ուժերը: Այն ժամանակ գուցե մենք էլ նորոգվենք:

Գալով որբերի խնդրին, ես միայն անկեղծորեն ողջունել կարող եմ մեր պատվական նախնեկանցիներին մի այդպիսի առաքինի և մարդասիրական գործի համար: Եթե դոքա կամենում են մաքուր խղճով ապրել աշխարհիս երեսին, մի ուրիշ բան չէին կարող ձեռնարկել այսօր, քան թե ձեռնարկել են: Բայց, ափսոս, որ կան մարդիկ, որ խիղճը այլապես է թելադրում նրանց: Զոր օրինակ այստեղ, Մոսկվայում ապրում է մի թշվառ, իր ամուսնուց դժպտահ տիկին, հարուստ միջոցներով, որ խոսակցության մեջ հայտնեց, որ խիղճը ըստ ամենայնի մաքուր է: Խոսակիցներից մինը, անդամ մեր մասնաճյուղի, օգուտ քաղելով այդ հանգամանքից, առաջարկեց նրան մեր որբերին օգնել: Տիկինը զայրացած պատասխանեց, որ նա ազնիվ խոսք է տվել իրան, որ Թուրքիայի (մարդն էլ թրքահայ է) հայերին ոչ մի կոպեկ չտա: Նրան ասացին, որ սրբ, շորս-հինգ տարեկան երեխաները դեռ ազգություն չեն ճանաչում, նոքա

մարդկության երեխաներն են: «Այո, ես գիտեմ, բայց չեմ տալ»,— պատասխանեց անառակ կինը, աստծո հանցավորը, մարդկանց ատելին,— բայց փառք աստծո, որ այս տեսակ հրեշներու առեղծվածները [տեքստում այսպես է] սակավ են մարդկության մեջ:

Շատ լավ կլիներ, որ Ձեր քաղաքացիները իրենք հանձն առնեին ղեկավարել յուրյանց գործը. ես կարծում եմ, որ այն ժամանակ հանգանակությունը ավելի կհաջողեր: Բայց եթե այդպիսի մտադրություն չկա, դժվարություն նրկատելով ապագայում, այն ժամանակ մասնախումբս պատրաստ է կատարել Ձեր հանձնարարությունը:

Թույլ տվեք ուղարկել Ձեզ մի օրինակ նոր լույս տեսած տետրակի, որի պարունակությունը Ձեզ հետաքրքրելի կլինի, որպես նախկին աշակերտի և հայկական հարցերով զբաղվողի:

Ողջուններով տիկնոջդ և Ձեզ, մնամ անձնվեր Ս. Շահագիզ

1 Բերբերյան Մինաս (1871—1919)—հրապարակախոս: Մնվել է նոր նախընկանում: Կրթություն է ստացել Լազարյան ճեմարանում, ապա Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Մասնակցել է Ռ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի ողջամիտ հրատարակություններին: Ռուս գրող, բնագետ, թարգմանիչ, հայ գրականության բարեկամ ու պրոպագանդիստ Յուրի Վեսելովսկու հետ լույս է քնծայել «Армянские беллетристы» ժողովածուն: Հրատարակել է «Սիրո և վշտի երգիչը» (Ս. Շահագիզի մասվան առթիվ) գրքույկը (1907):

Սիրելի երվանդ

Որքան չափավորես ու մեղմացնես էմինի բնավորության նկարագիրը, այնքան ևս համակրելի կլինի քո ուսումնական աշխատությունը: էմինը ապրել է մի այնպիսի ժամանակ, որ և <բարի> խառնվածքով մարդը պիտի լիներ ավելի խստապահանջ անագորի, ինչպես և ներշնչում էր նիկոլաևյան ռեժիմը: Ավել կշիռ տուր նրա բազմակողմանի ուսումնասիրության գործերին, որ մի խոշոր հակապատկեր է ներկայացնում մեր այժմյան թերուս դիլետանտների գործունեության, որոնք դեռևս ոչինչ չարած, ամեն բան համարում են կատարյալ ետամնաց վերաբերությամբ: Մի այդպիսի ծանրակշիռ հայացքը, որ նվիրված կլինի էմինին, գուցե կսթափե և նոցա թերևս հարաբերությունները դեպի ուսումնական գործը և օգտակար կլինի վերաճող սերնդի անձնահարդության:

Շատ և շատ ուրախ եմ, որ որբերի հոգսը դուք ինքներդ հանձն եք առել ղեկավարելու, որ հայտնի բան է, ավելի կենդանի և տոկուն կլինի: Արմավիրեցի Տորոնովները մեզ հայտնել են, որ իրանք պիտի պահեն առանձին որբանոց մեր ձեռքով և արդեն հանձնել են մեզ առաջին վճարը՝ 1250 ռուբլի: Այսօր ուղարկեցինք պատրիարքին մի գիր, որով պահանջում ենք հաշիվ ու համար մեր փոխադրած գումարների, առանց որոնց անհնարին է ապահովելու չորս տարվա անընդհատ հանգանակությունը: Պոլսի հայերը, ինչպես երևւում է հաշիվ բանը լավ չեն հասկանում. նոքա չեն կարող վերահասու լինել այն ճշմարտության, որ հասարակաց գործերի աջողությունը միայն կախված է նվիրված գումարների մանրամասն հաշվետվությունից: Վասն որո և դուք

ձեր առաջին գրության մեջ պիտի անպատճառ շեշտեր այս հանգամանքը, որով կարող ենք միայն և հասարակաց համակրությունը գրավել:

Նույնպես շատ ուրախ եմ, որ այդտեղ կամենում ենք կազմել աշխատավորների մի խումբ և այդօրինակ սպասավորել ձեր կղզիացած հասարակության, որ այնքան կարոտ է օգտակար ձեռնարկության: Այդպիսի մտավոր աշխատությունը կհաջողվի միայն այն ժամանակ, երբ աշխատավորները կըլինեն վեհանձն, ներողամիտ, կմոռանան յուրյանց «եսականը», ընդհանուրի շահերի առջև: Այս մտքով ողջունում եմ ձեզ և ցանկանում եմ զեղեցիկ հարատևություն:

...Ձեր բանաստեղծ հորեղբայրը այժմ միանգամայն դառել է պրոզայի, կամ ավելի ճիշտ է ասել, հասարակ գրագիր: Ամեն օր երկու երեք նամակ եմ գրում, հաշիվներ եմ կազմում, ցուցակներ եմ շինում: Եվ այս բոլորը հակառակ է բուն տրամադրությանս: Բայց որբերի խնդիրը այնքան է անհրաժեշտ, որ ուղես-շուղես պիտի անել: Ճեմարանում շատ և շատ ազատ էի, քան թե այժմ. սորա համար ջղերս սաստիկ ցնցված են և գիշերներս կիսաքուն:

Համբույրներով սիրելի Հեղինեին և քեզ:

Սնամ սիրող ձեզ Ա. Շահագիզ

16

22 փետրվարի 1899, Մոսկվա

Սիրելի Երվանդ

Վերջապես մեր սիրելի Թելուին¹ ճանապարհեցինք դեպի ձեզ: Անկասկած այժմ տեղ հասած կլինի: Մի ուրիշ նոր բան չունիմ հաղորդելու քեզ: Միայն կարող եմ ուրախացնել քեզ, որ Արմավիրցիք այստեղ լինելով մոտ 15 հոգի խորհրդակցեցինք միմյանց հետ, որ հանգանակեն իրանց մեջ 1700 ռուբլի և հանձնեն մեզ առանձին որբանոց հիմնելու. այլ և ընտրվեցին ժողովրդից, նույն Արմավիրում շարունակելու գործը: Մի շատ տխուր և անժամանակ բան պատահեց այստեղ. մեր ուսանողները, համախմբվելով մի տան մեջ, որ հակառակ է օրենքին, նորանցից շատերը ձերբակալվեցին Կարամուրզայի² հետ և մինչև օրս չեն արձակվել: Այսուհետև, հայտնի բան է, մնաք բարով կոնցերտներ և ներկայացումներ: Մի բեռ ևս ծանրացավ վրաս. մեր Պերճը ուղարկել է իր կենսագրությունը և խնդրում է մասնաժողով կազմել և փող հավաքել: Պերճը ամենևին չի ուղում աչքի առնել ներկա հանգամանքներ, և այս պատճառով գործի աջողությունը վերագրում է իմ ջերմեռանդության աստիճանին: Եթե առհասարակ հեղինակի օգնությունը կախված լիներ միայն իմ ջերմեռանդության աստիճանից, անտարակույս, ես իմ բոլոր ջանքը գործ կդնեի, որ այդ մտավոր մշակները կուշտ ու անկարոտ լինեին, բայց ինչ պիտի անե իմ ջանքը, երբ դա հանապաղ պատահում է քարաժայռերի:

Ստացա «Աբովյան-Նազարյան» ֆոնդի³ պաշտոնական ղեկուցումը, որից իմացվում է, որ տոկոսները տրված են Աղայանին, Հով. Թումանյանին և Փափաղյանին:

Երևի, կարդացած կլինես «Հանդես ամսօրյա» և «Բազմավեպի» խորին համակրությունը «Երեսուն և հինգ տարի»⁴ բրոշյուրի առիթով: Մինչև անգամ «Բազմավեպը» գովաբանելով բրոշյուրը, մեր ճառին տալիս է «հայրենասեր» ածականը: Երևի «Բազմավեպը» այժմ սակավիկ է արդարացնում մեր դայ-

րույթը առհասարակ հոգևորականների մասին, և մանավանդ կաթոլիկ հոգե-
վորականների, որոնց բռնած դիրքը Փոքր Ասիայում այսօր մարդասիրությու-
նը դարձրել է մարդատեցության և անառակ, անբարոյականության միջոցնե-
րով խեղճերին զրկում է հացից, որովհետև այդ խեղճը թեև մարդ է, քրիստոնե-
յա, բայց դժբախտաբար, լուսավորչական է։

«Բազմավեպը», գուցե այժմ մի փոքր համոզվում է, որ մարդկային բախ-
տավորութունը զուտ կրոնական հիմքի վրա, խախուտ է, վտանգավոր է։ Հար-
կավոր է քաղաքակրթութուն, լուսավոր գիտական կրթութուն, որ միայն կա-
րող է հանել հոգևորականներին յուր նեղ զգացումների ղնդանից և տանել
լայնահայաց, վեհանձն ներողամիտ հանդիսարան։ Արդարև, առանց այս տե-
սակ ուղղության կրոնը միշտ կմնա պաշտպան խավարի թագավորության
նեցուկ, թշվառի կեղեքիչ, անարդար իշխանության փառաբանող։

Քո հոգվածը կրիտիկոս Բերբերյանի հոգվածի հետ կարծեմ տպվում է
«Փորձի» մեջ։ Ինձ գրում են Բաքվից, որպես պատասխան իմ բազմաթիվ ցըր-
ված նամակների, որ այնտեղ սկսվել է հանգանակութուն հօգուտ որբերի և
որ հավաքած դուժարը կամենում են հանձնել պ. Ջանշյանին, նրա ընտրած
ճանապարհը ավելի ապահով համարելով։ Սա դրեցի, որ գործը բարի է և գե-
ղեցիկ, բայց, որ Բաքվի պես քաղաքը ինքը կարող է ունենալ առանձին որ-
բանոցներ, ինքը հոգալ իր գումարի մասին, մանավանդ որ այդօրինակ գործը
ավելի կենդանի կլինի այսուհետև։

Ողջուններով ձեզ բոլորիդ, մնամ սիրող ձեզ՝ Ս. Շահալիդ

1 Թելլի—երվանդ Շահաղիդի մայրը, Սմբ. Շահաղիդի եղբոր կինը։
2 Կարա Մուրզա Քրիստափոր Մակարի (1853—1902)—երգահան, մանկավարժ, խմբա-
վար, Լրաժշտական քննադատ, ժողովրդական երգերի հավաքող։
3 1892 թ. Սմբ. Շահաղիդի մանկավարժական և դրական գործունեության 30-ամյակի առ-
թիվ նվիրատվութուններից ստացված գումարը Շահաղիդը հատկացնում է Աբովյան-նազար-
յան գրական ֆոնդին։
4 Լույս է տեսել Մոսկվայում, 1895 թ.։

Սիրելի երվանդ

Շատ ժամանակ է որ ստացել եմ և՛ նամակդ, և՛ «Մկրտիչ Հովսեփյան»—
կենսագրական-գրական տեսություն—գեղեցիկ գրվածդ։

Այդ գիրքը դու նվիրել ես ինձ։ Անկեղծորեն հայտնում եմ քեզ իմ խորին
շնորհակալութունը, որ դու նվիրել ես ինձ ոչ իբրև հորեղբոր, այլ իբրև քո
նախկին վարժապետին, որ պատճառ է եղել քո մտավոր թռիչքին ու բարոյա-
կան ուղղության։ Այդ մի անշահասեր և մտերիմ զգացումների արտահայ-
տություն է, որ այնքան պակաս է մեր աշակերտ երիտասարդներից շատերին։
Բայց, չեմ ուզում ծածկել մեղքս, որ ամբողջովին չեմ կարդացել այդ հետա-
քրքրական շարադրությունը, նախ որ Ադ. Ծատուրյանը իսկույն առավ ին-
ձանից և տարավ կարդալու և ևրկրորդ, որ գլխավորն է, իմ փոքրիկ գործը՝
վերջապես ստանալով կամիտետից, ստիպվեցի նորից արտագրել և ծանոթու-
թյուններս միացնել տեքստի հետ, որ բավական ժամանակ խլեց։ Սակայն
ուշադրությամբ կարդացի «էմինի մանկավարժական գործունեությունը» և նը-

րան կից Ռ. Պատկանյանի «Մանկական հիշողությունները»²։ Դու քո մերկացումներով ու անհերքելի փաստերով միանգամայն զինաթափ ես արել այն թյուրիմաց ու փտուն «Հիշողությունները», որով և նորից ապացուցել ես, որ Ռաֆայելը որքան համակրելի է յուր գեղեցիկ բանաստեղծություններով, այնքան էլ անհամակրելի է յուր կարծիքներով ու հարաբերություններով դեպի մարդերը։

Նոր գրականական լեզուն վերագրել ճեմարանին կամ Հաշտարխանին (ըստ Քերոբեի³) մի անհասկանալի և վայրենի եզրակացություն է, մանավանդ առաջինը, որի մեջ ես միայն տեսնում եմ մի Ռաֆայել, ներքին ծալքերում նախանձ, նսեմացնելու «Հյուսիսսփայլի» նախաձեռնությունները։ Բավական էր միայն հարցնել, թե զուր, կամ դարաբաղցին, շատ անգամ անդրազետ լինելով, մի ուրիշ քաղաք, զոր. Մոսկվա ընկնելով ինչ լեզվով են խոսում։ Ներանք ոչ ճեմարանում և ոչ ներսիսյան դպրանոցում չլինելով և ոչ գրքից ուսանելով, խոսում են այն ոճով, որ շատ մոտ է Արարատյան բարբառին։ Ասում եմ, որ այսքան բավական է միայն հարցնել։

Քո նոր գիրքը, որ մի համեստ խորագիր է՝ կրում «էմին Հովսեփյան», որքան կարացի հարեանցի թերթել, ամփոփում է յուր մեջ և ուրիշ գրականական և հնախոսական հարցուխնդիր և լուսաբանություններ. տեսնում եմ, այդ զըրքի մեջ մի բան, որ շատերիս պակաս է, — բարեխիղճ ուսումնասիրություն քննելի նյութերի, մի մարդ, որ անպայմանապես համոզված է, անկողմնապահ է յուր դատողության մեջ, թեև տեղ-տեղ անհամաձայն լինել ուրիշների կարծիքների հետ։ Այդ գիրքը, անտարակույս, կկարդամ ծայրեծայր, երբ որ վերջացնեմ իմ գործը, որով այս ըոպեիս էլ զբաղված եմ։

Նույնպես ընդմիջումներով ինձ այստեղ պատահեց կարդալ քո պատասխանները («Տարադի» մեջ) հակառակորդներիդ Նալբանդյանի մասին։ Ծն էլ ծանոթ եմ այդպիսի հակառակորդների, որոնք, հանկարծ, պատահական գրական դառնալով, սկսում են վերևից, տակից, ամեն կողմից հարձակվել, բայց նրանց գրածներում մի կողմ էլ չկա, որ տաներ դեպի խնդրի էությունը...

Բայց քեզ մի ծիծաղելի բան հաղորդեմ։ Գրքիս պատճառով համարյա մի ամբողջ ամիս մնացի Մոսկվայում, այնպես էլ չստացա թույլտվություն։ Մըկըրտիչի⁴ հետ միասին դարդ էինք անում, թե ինչ է պատահել, անդադար նամակ ու հեռագրեր էինք ուղարկում Պետերբուրգ, մերթ կամիտետին և հաճախ Բաշինջաղյանին։ Եկա Յալթա, բավական սպասելուց հետո նորից հեռագիր ու նամակներ։ Վերջապես բանը պարզվեց։ Իմ ազնիվ բարեկամ Մկրտիչը մոռացել է 80 կոպ. մարկա կպցնել։

Հեղինեին իմ սիրո ողջությունները։

Սիրով ձեզ Ս. Շահազիզ

1 Խոսքը «Հիշողություններ վարդանանց տոնի առիթով» գրքի մասին է. որ լույս տեսավ Մոսկվայում 1901 թ.։

2 Ռ. Պատկանյան, Մանկական հիշողություններ պարոն Մկրտիչ էմինի մասին։ Տպագրվել է Մոսկվայում, 1898 թ.՝ «Մկրտիչ էմինի երկասիրությունները հայոց լեզվի. գրականության և պատմության մասին» ժողովածուում։

3 Պատկանյան Քերովրե (1833—1889)։

4 Խոսքը Մկրտիչ Բարխուդարյանի մասին է։

Սիրելի Պերն

Ինչպես տեսնում եմ նոր տարու շնորհավորության նամակս չես ստացել, ուր այնպիսի բան էի գրել, որ չէիր կարող չպատասխանել։ Այն նամակում, ուղարկած պատկերիդ նայելով, ասում էի. «Հավիտյան կաց, տարիքդ ճանձնապանենց բարդիի պես երկարանա՛, գրիչդ մեծ առվի պես խշխշա, Պետոյի գյուլի պես առատ լինի և գրածդ էլ պայծառ ու մաքուր ինչպես Քասաղի ձրկներն են, առանց փսիհների, ինչպես Մոսկվայի գետի ձկներն են»։ Եվ առհասարակ տատի և պապի օրհնությունը բոլորը քեզ ընծայեցի։ Բայց պատասխանը չստացա։

Ես այժմ թեև մի առանձին էլ բան չունեմ, բայց բոլոր բանի մեջ եմ, ձեմարանումը ես ազատ էի. այժմ, թեև արածս չնչին բաներ են, այնուամենայնիվ մեջքս ծռվել է նամակներ գրելուց. գլխավորը որբերի խնդիրն է, որոնց համար կոպեկներ եմ մուրում հարուստների դռանն, բայց խոմ գիտես, որ հարուստները սովածի դարդը չեն հասկանում։ Հայտնի բան է, որ անարդարություն կլինեն ասել, թե բոլորն էլ այդպես են։ Այս օրերս գտա մի հարուստ մարդ, որ խոստացավ որբանոց պահել 25 որբերով երեք կամ չորս տարի ժամանակով, յուրաքանչյուր տարի հատկացնելով 1250 ռուբլի։

Մինչև այսօր մենք Թուրքիայում ունենք 5 որբանոց (վեցերորդը այս օրերս կբացվի) և այդ վեց որբանոցներում թիվը կհասնի 180 որբերի, որոնց տարեկան ծախսը է 9000։ Մինչև այսօր փոխադրել ենք 12000։ Շատ գոհ եմ պատրիարքի հաշիվներից, այլև տեղական, գավառական հոգաբարձություններից, որոնք անսխալ հաշիվներ են ներկայացնում։ Հայտնի բան է, որ եթե մեր գործը լիներ ազատ, հրապարակական, տասնապատիկ կհավաքեի, բայց մենք լուռ ու մունջ և իրավունք չունենք «Բ վերա քարոզել»։ Դու էլ, ուրեմն սյիտի լուռ մնաս. երբ որ ժամանակը կգա, հրապարակով հաշիվ կտանք բոլորին։

Մնա բարով սիրելի բարեկամ։

Սիրող քեզ Սմբատ Շահազիզ

1 Սմբատ Շահազիզի մայրը՝ Խոսրովադուխտը կամ «Խոսրով նանը», ինչպես աշտարակեցիք են անվանել նրան, եղել է «Ճանճապանենց տնից», որոնք իրենց տան առաջ ունեցել են վեր խոյացող բարդիներ։

Սիրելի Երվանդ

Այս րոպեիս ստացա նամակդ և այս րոպեիս էլ, քանի որ ազատ ժամանակ ունիմ, գրում եմ պատասխանը։ Մի բան շատ մխիթարական է, որ քո գրական երկերը անվերջ են, ահագին երեսներով ու քանակությամբ։ Այդ կամի ասել, որ գրելու և աշխատելու ախորժակը քեզ համար դարձել է մի անհրաժեշտ պիտոյք, ինչպես էլ անհրաժեշտ է օրական հացը [...]. Դու հանգիստ աշխատիր և անսայթաք դնա քո ընտրած ճանապարհը և ամենևին ուշ մի դարձնիր բոթոթների հաշին։ Այս մտքով, կարծում եմ, որ մի առանձին հարկավորություն չկա Տ. Հ-ի [դեմ] պայքարելու՝, որովհետև «սեկին սապոնը ինչ կանի, խեղին

խորատը ինչ կանի»։ Թող այդ խեղճը մեղ էլ «Լևոնի վշտի» հետ միասին հայհույեն։ Կղա ժամանակ, երբ անաշառ դատավորները, հայտնի բան է, չհետեւելով Տիգրաններին, կտան «Լևոնի վշտին» յուր տեղը հայ գրականության վերածնության մեջ։ Այդ անաշառ դատավորները ոչ «Լևոնի վշտի» ճրագին կնախանձեն, եթե արդարեւ մի այդպիսի ճրագ կա նրա մեջ և ոչ կթաքցնեն այն հանգամանքը, որ նույն «վիշտը» ոչ թե ճրագ է եղել, այլ միայն մի հաղիվ հաղ առկայծող պատրույգ, որ իսկույն հանգել է և թանձր մուր է թողել նոր գրականության մեջ։ Մի բան միայն ես չեմ հասկանում, թե ինչպես կարելի է «հին հագուստ» կոչել այն, որ ոչ ոք չհագած մաշվել է։ Միթե մեղավոր է «հագուստի կարող-ձևողը, եթե նրա տերը—հասարակությունը կամ մեռած է և կամ թե երկարատե հիվանդության անկողնում ընկած»։

«Լ. վշտի» դադափարները, վերաբերյալ հասարակաց կյանքի կազմակերպության, շորի պես հնանում են այն ժամանակ, երբ «այդ հասարակաց կյանքը» արդեն մշակագործել է ինքը յուր մեջ և այնուհետև կարոտ է ուրիշ գաղափարների բարձրագույն հառաջադիմության համար։ Ինչ որ Լ. վիշտը պահանջել է հայերից, մինչև այսօր այնքան է իրագործվել, որ համարյա թե անկարելի է նկատել։ «Լևոնի վշտի» առաջնորդող գաղափարն է մայրենի լեզվի զարգացումը հայերի մեջ, որի սկիզբը տիրապես տրվում է մայրերի միջոցով։ Վաթսուն թվականներից մինչև այսօր շատ է առաջ գնացել հայ կինը։ Կարծում ենք, շատ, շատ փոքր։ Հայ կինը առաջ է գնացել միայն նրանով, որ ամբողջապես ծփում է մոդաների բազմատեսակության մեջ։ Այդ տեսակ հարցերի մասին շատ երկար կլինի խոսել։ Իսկ մեր կրիտիկոսները, որոնց համար խոսքի տնտեսություն չկա, անդադար շռայլում են տողեր ու էջեր, միայն թե կարողանային «Լևոնի վշտի» նշանակությունը նսեմացնելու։ Ինչո՞ւ, որովհետև.

«Մարդիկ սովոր են, մանավանդ անկիրթ և ասիացի նեղսիրտ հոգով, հայհույել մի մարդ, մի անկաշառ սիրտ և ամեն բանին նայել շար աչքով» («Լևոնի վիշտը»)։

Կարդացի «Հիշողություններից» վերջին մասը և ծիծաղս չկարողացա բռնել Պատկանյանի նոր դարին ընծայած ածականի պատճառով։ Դու էլ, Երվանդ, ինչ մանրատես մարդ ես [...] Ես հասկանում եմ, որ դու այս դիպվածում լուր ազդարարի կամ ղեկուցողի դեր ես կատարել։ Ինչևիցե, բայց «նոր դարը» կարող չէ քեզանից շնորհակալ լինել։ Նույնպես ծիծաղս շարժվեց, որ դու, ասես թե մեղադրելով բանաստեղծին, որ սա յուր բարեկամ Բահաթրյանին զիծ է ասել և հետո անմիջապես ավելացնում ես, որ նույն Բահաթրյանը շուտով վախճանվեց իսարկովի խելագարների հիվանդանոցում։ Կարծես թե կողմնակի հաստատում ես Պատկանյանի գուշակությունը։ Լավ կլիներ, որ մի փոքր հետաձգեիր վերջին նախադասությունը, որպես բանի էությունը չշփոթվեր։

Եղբորդ գալը և գնալը ինձ համար նոր բան է, թեև ինձ մի անգամ գրել էիր այդ հանգամանքի մասին։

Սիրով, ողջուններով և համբույրներով ձեզ Ս. Շահադիդ

1 Հովհաննիսյան Տիգրան (1865—1921)—թարգմանիչ, թատերական գործիչ, կրթությամբ իրավաբան։ Նա քննադատական հողված տպագրեց Շահադիդի «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» գրքի մասին և Շահադիդին մեղադրեց հոգեորականության հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի համար։

Սիրելի երվանդ

23 սեպտեմբերի նախիջևանը, հետևաբար և հայոց ազգը սոնախմբեց մի խաղաղ մտավոր հաղթանակ, որ տարել է հանգուցյալ Պատկանյանը¹։ Խեղճ հայ մշակներ, որոնք կենդանության ժամանակ ենթարկվում են հազար ու մի զրկանքների, իսկ մահից հետո արժանանում են այդ տեսակ հանդեսների և փառաբանության։ Բայց հազար երանի զնացողներին, քան թե մնացողներին։ Ժամանակիս վտանգը տեսնելով և ազգիս սսլանման ականատես լինելով, մնում է դառն հառաչանքով ողբալ մեր դիակների վերա, որոնցով այսօր էլ լցված են Փոքր Ասիայի ոչ միայն խոր ու խուփ տեղերը, այլև հայտնի մարդաշատ քաղաքներում մեծամեծ պետությունների ներկայացուցիչների առջև։ Վայ քեզ, եվրոպական քաղաքակրթություն, որ վարակված ես բարձր կուլտուրական ցինիզմով։ Հիրավի, խիստ հուսահատական է մեր դրությունը, ես չեմ տեսնում, թե որտեղից պիտի լինի մեր փրկության միջոցը։ Ահա թե որպիսի խորհրդածություններ ծագեցին իմ մեջ, երբ մենք ցնծալից կեցցենեքով տոնախմբեցինք երեկվա հանդեսը։

Մնամ քեզ սիրող Ս. Շահագիզ

1 1901 թ. նախիջևանում տեղի ունեցավ Ռ. Պատկանյանի մահարձանի բացման հանդիսավոր արարողությունը։

Սիրելի երվանդ

Քեզ հետ միանգամայն համաձայն եմ, որ կրոնի անունով անկարելի է միացնել մի ազգի նույնիսկ կրոնով բաժանված մասերը. այդ ցանկալի միությունը պետք է լինի լեզվի և գրականության միջոցով։ Բրավո, հենց որ կրոնը մեջ է մտնում միացնելու նպատակով, մենք տեսնում ենք համաշխարհային պատմությունից, փոխանակ միություն, առաջ են դալիս արյունահեղություններ, անվերջ ու անօգուտ վեճեր, որ հակառակող կողմերը տանում են հասցնում խորխորատի ափին, երկուսին ևս աղետ և թշվառություն պատճառելով։ Դժբախտաբար, կրոնը ինչպես մի անհաստատ դրություն, որոշ անհամաձայն շունենալով, անհուն շառավիղներ է արձակում և խոր թափանցում սոցիալական կյանքի խորշերի մեջ, այնպես որ հարկավոր է մեծ կուլտուրական աշխատություն, որ ազգը կամ առանձին անհատը կարողանա ընդդիմադրել կրոնի անարգել տիրապետության։ Այս բանին օտարազգի հրապարակախոսները բաջ վերահաս լինելով, ճիգ են թափում պետությունների ծրագրերից։ Դանել եկեղեցին և աշխարհական գործերից հեռացնել հոգևորականների իրավասությունը, բայց նույն պետությունները, մասամբ հետևելով տրադիցիային և առավել իրանց առանձին շահերին նկատելով, գերադասում են հետադեմ տարրը առաջադիմականից։ Այսպես էլ, ամոթ մարդկության, մինչև այսօր շարունակվում են նույն միջնադարյան կրոնական սլայքարները. այնպես էլ մի անմեղ ժխտակատարություն, որպիսին հոգեհանգիստն է, պատճառ է դառնում երկար բանակռիվների, որովհետև հայ հոգևորականները արգելում են ասորադասի վրա հոգեհանգիստ կարդալ։

Հայոց եկեղեցին, որ համեմատաբար ներողամիտ է եղել ուրիշներից այդպիսի դեպքերում, այժմ վարակվել է ուրիշ ֆանատիկոսներից և օրինավոր է համարում նույնպես արգելել: Սկսած, որ նա հետևում է տգեղ օրինակներին: Այս էլ մեր ժամանակի խորիմաստ աստվածաբանության հետևանք է. մի աստվածաբանություն, որ ուղղակի բացասումն է աստվածություն:

Գալով «Նոր դարին» բաժանորդ գրվելու հարցին, ես թեև առաջ հրաժարվեցի, բայց հետո միտս ընկավ հայրենասիրության պարտքը—և գրվեցի: Ես մտածեցի, որ եթե ամեն մի անհամակրող ետ քաշվի այդ տեսակ թերթերից, թերթը կարող է դադարել, որ մեղ ցանկալի չէ, որովհետև մյուս անգամ հրաման չի ստանա վերականգնվելու, այնպես որ իմ բաժանորդագրությունը հարկադրված է և ոչ կամավոր: Ուրիշ դեպքերում մենք մի լրագիր, որ հակառակ է մեր ներքին համոզման, դեն կշարտեինք և երեսը անգամ չէինք կամենալ տեսնել: Բայց հայրենի վերաբերմամբ մենք պետք է մարսենք վերոհիշյալ պատճառով...:

Շնորհավոր նոր տարի և բարի կաղանդ:

Սիրող և ողջունող ձեզ Ս. Շահազիզ

22

14 ապրիլի 1902, Մոսկվա

Սիրելի Երվանդ

[...] Մինաս Բերբերյանից ստացա 2 օրինակ «էտյուդի»¹. մինը փառակազմ: Այդ գործը «Վտակից» արտատպած, ասում եմ յուր ընդհանուր գծերով բավական համակրելի ֆոնի վրա է քաշված: Հեղինակի հայացքը «Լևոնի վշտի» մասին մեծ մասամբ ուղիղ է և որ զլխավորն է, հաջար անգամ ավելի անկեղծ ու ազնիվ, քան թե ընկերովի փսխած քննադատությունը, որ իմ երախտագետ աշակերտն է թխել ժամի մեջ, և որի անունը տնարժան եմ համարում այստեղ հիշել:

Իրավի. վարժապետի գործը քննել աշակերտներին յուր տեսակետից ոչ թե կարելի է, այլև անհրաժեշտ, հարկավոր, եթե այնպիսին գիտուն է և ընդունակ, որովհետև այդ վարժապետի պարծանքն է: Բայց զինվորվել իր դաստիարակչի դեմ և փրփրել, սեփական է վայրենի բնավորություններին և աններելի հանցանք է, երբ այդ հանգամանքը առաջ է գալիս մանր-մունր հաշիվներից: Այս իմ դառն մտածողության առիթը այն է, որ այս օրերս 12 սեպտեմբերի «Новости дня», հայտնի շանտաժիստ լրագիրը, հրատարակեց մի հոդված, նվիրված Վեսելովսկու «Армянский поэт Сибат-Шахазиз» կրիտիկական էտյուդին, թրձած նույնանման նյութից ու ուղղությամբ, ինչպես և վերը հիշված համբակի գործը...: Այդ տեսակ աղտեղությունը վաղուց ինձ ծանոթ է և ես միանգամայն հանդիստ եմ. միայն վախենում եմ, որ դու կամ դուր անհանգիստ լինեք, երբ հիշյալ հոդվածից իմանաք, որ ես մեռած եմ. «покойный поэт» ասված է, որ երեկ 13 թվին, այսինքն մի օր հետո ուղղած է «он жив и здоровствует»: Եվ այս բոլորը գիտությամբ արված բաներ են, իբր թե գրողը օտար մարդ է, ինձ չի ճանաչում. իսկ հետո, համարյա, նույն օրին մի անտեսանելի ոգի նրան աղղել է ձգմարտության: Երվանդ, ուրախացիր, որ քո հորեղբայրը Քրիստոսից մի քանի ժամ առաջ է առել հարություն:

17 Հանդես, № 1

Արմենակից² մի սիրալիր նամակ ստացա «Армянск. поэт». ուղարկած գրքի առիթով: Արմենակը շատ է ուրախացել և խոստանում է ինձ ուղարկել յուր ընտանիքի խմբովին հանված լուսանկարը... Գործերս այնքան խառն են և անորոշ, որ չգիտեմ, թե ինչպես և ուր պիտի անցկացնեմ ամառը:

Մոռացա քեզ գրել երկու կարևոր բանի մասին, որ այժմ դբադեցնում են ինձ: Խոսքս վերաբերում է կտակիս և «Հիշողություններ Վարդանանց տոնի առիթով» երկրորդ գլխին: Կտակիս³ սևագիրը և այդ երկրորդ գլուխը, որ արտագրված պատրաստ էր հրատարակելու, ինչպես երևում է, կորցրել եմ Կիսլավովսկու, որ այժմ կամենում եմ վերանորոգել: Կտակը շատ հեշտ է: Կժվար է վերջինը: Քեզ պետք է բացատրեմ, որ այդ երկրորդ գլուխը վերաբերում էր «փոքրիկ ազգերի վիճակին» այժմյան եվրոպական ամենակործան ուղղության շրջանում, երբ ամեն մեկը նրանցից ուզում է Բեյի պես բռնակալ, տիրել բոլոր աշխարհին: Որովհետև այդ գլխի մեջ ցնդած մտքերը (ինչպես Ֆինլանդիայի և Տրանսիլվանիայի մասին) տրամագծաբար հակառակ լինելով ցենզուրական կանոններին, կարող էին արգելք լինել գրքի հրատարակության. իմ ուսման բարեկամները, երկու փաստական խորհուրդ տվին բաց թողնել: Այդ գլուխը մոտաբար այսպես է սկսվում. «Բայց ազգերի մահը, մանավանդ փոքր ազգերի, միշտ էլ չի հետևում յուր բնական ընթացքին և ազգը, ենթարկվելով զորավոր բռնի հարվածներին, կորցնում է յուր ինքնուրույնությունը և ռեալականապես մեռնում: Այժմյան քաղաքակրթությունը, թեև իրան նշանաբան է նախագծել «Եղբայրություն, մարդասիրություն և արդարություն բոլորի համար», բայց իրոք այդ արդարությունը երկու հակադիր ծայր ունի. մի ծայրին ինքն է բազմած, մյուսի վրա սիրակշիռ բռնությունը» և այլն:

Շնորհավոր զատիկ. ցանկանում եմ բոլորիդ քաջառողջություն: [. . .] Պետերբուրգի լրագրերում երկու գեղեցիկ ռեցենզիա կա Վեսելովսկու գրքի մասին [. . .]:

Սիրող ձեզ Ս. Շանազիր

1 Խոսքը Յուրի Վեսելովսկու «Армянский поэт Смба-шах-Азиз» թանգատական էությունի մասին է, որ լույս է տեսել 1902 թ. Մոսկվայում:

2 Արմենակ—Շանազիրի ազգականներից:

3 Սմբատ Շանազիրի մահից հետո նրա թղթերի մեջ գտնվել է «Կտակիս շարժառիթը» գրվածքը, որը Երվանդ Շանազիրը ամբողջությամբ տպագրել է «Սմբատ Շանազիրի կենսագրությունը» գործում (Երևան, 1944, էջ 40): Ստորև հրապարակում ենք «Կտակը» մասնակի կրճատումներով:

«Իմ առաջին ազգականը իմ ազգն է, որովհետև ազգը, ինչպես հավաքական միություն, ավելի երկար կյանք ունի, քան թե առանձին անհատը, այդ պատճառով էլ իմ գույքիս մեծ մասը կտակել եմ իմ ազգիս: Եթե մի ինտելիգենտ կամ առհասարակ մի կրթված մարդ յուր արատությունը կտակում է միայն յուր ազգականներին և մոռանում է հասարակությունը, այդ ասել է, որ նրա կրթությունը դեռ խոր արմատ չի արձակել նրա մեջ: Եթե իմ ազգակից մահացնեն անբավական մնան ինձնից, որ բիշ եմ կտակել նրանց, կամ թե ոչինչ չեմ կտակել, փույթ չէ, ես շատ բավական եմ ինձանից, որ այս տեսակ կտակ եմ արել:

Ինձ հարկավոր չէ նյութական արձան կամ պսակ, ես ինչպես իմ կենդանության մի փայլել ևս այդ ժամանակավոր ցույցներից, այնպես էլ փախչում եմ դրանից: Իմ մահից հետո, միակ արձան, որ կարող է ընծայել ինձ հասարակությունը, այդ այն է, որ բարի մարդիկ հետևեն իմ օրինակին և զոհարեն լինեն՝ իրենց զոհախոտ ազգի վիճակը թեթևացնելու:

նա ինչպես իմ կենդանության ժամանակ, այնպես էլ իմ մահից հետո ավանդում եմ իմ բաղձաթիվ աշակերտներին համերաշխության պատվերը, որով մենք շաղկապված ենք եղել ճեմարանի հարկի տակ, աղաչում եմ անմոռաց հիշել մարդասիրության սկզբունքը և աջակցել հասարակաց պահանջներին»:

23

30 դեկտեմբերի 1902, Մոսկվա

Սիրելի Երվանդ

Մտքի և հոգու հանգիստ գտնել մեր մթնոլորտում, մեր քայքայված կյանքի մեջ անկարելի է. ամեն կողմից ասեղ ու մախաթ է, որ անդադար ծակծկում են մեր ուղեղը: Անմխիթար տեսարաններ ներսից և ավելի անմխիթար դրսից: Մեղ շատերը, հայ հեղինակներն էլ կամ գրողներին, հանդիմանում են, որ պեսիմիստ մարդիկ ենք, ուրախության նշույլ չի երևում մեր գրվածքներում. բայց ոչ ոք չի մտածում, թե այդ ուրախության նշույլը որտեղից քաղենք, երբ չորս կողմից մեղ խավար է պատում: Այսպես եմ խոսում այսօր, որովհետև ես էլի զբաղված եմ այն մախաթներով, որ վերը հիշեցի: Ես չգիտեմ, արդյոք փոքրիկ նոր գրությունս¹ լույս կտեսնի թե ոչ: Հենց այն ասեմ, որ ամեն գլխից հետո կրկնում եմ, «Բնչ անենք, որ փոքր ազգերը չհալածվեն ժամանակին լայնաբերան ու լայնափոր քուրայի մեջ»:

[. . .] Ծառուրյանի² անունը հիշելով քո նամակի մեջ, ինձ առիթ ես տալիս մի քանի խոսք ասելու նորա մասին: Քեզ պետք է ասել, որ այդ պարունը կարծեմ 16—17 տարի առաջ գալով Մոսկվա, ամենից առաջ վայելել է իմ բարեկամությունը և իմ անկեղծ սերը: Բն նա ինչ անհեթեթ գաղափարներով էր եկել, ես ավելորդ եմ համարում խոսել, բայց ոչ բոլոր մտածողության եղանակը փոխվել է այն օրից հետո, այդ ուղիղ է:

Կարծիքների փոփոխությունը առաջ է եկել նրա ընթերցասիրությունից, այլև շփվելով զանազան գրական շրջանների հետ, մանավանդ Վեսելովսկու ընտանիքի հետ, բայց կարծում եմ իմ կենդանի անընդհատ խոսքն ու զրույցը նույնպես ազդել են նորա վերա, վերաբերյալ այս ու այն հայկական գրական երևույթներին: Հիշյալ պարունը, հաղորդելով յուր կյանքի բոլոր տեղի ու անտեղի մանրամասնությունները, միանգամայն մոռացության է տալիս յուր կրթական հանգամանքները, երևի այն նեղ շրջանի ճնշման ենթարկվելով, որի հետ, ինչպես կտեսնենք, նա միացել է վերջին ժամանակները: Այնուամենայնիվ ես մեծ վեհանձնությամբ նայեցի այդ ապերախտության վերա և ձայն չհանեցի: Բայց նրա վերջին վարմունքը վերջապես շարժեց իմ արդարացի բարկությունը:

Ինչպես քեզ հայտնի է, անցյալ տարին մի կաթնակեր մանուկ³, Վեսելովսկու «Армянский поэт» գրքի առթիվ յուր հուշարարի հետ միասին «Новости дня» լրագրում զետեղեց մի պասկվիլ, որի մասին պ. Ծառուրյանը մի քանի անգամ եկավ ինձ մոտ և հայտնեց յուր ղզվանքը: Բայց ինչ մեծ դարմանք ինձ պատճառեց այն հանգամանքը, երբ այդ կաթնակեր մանուկները մի բրոշյուր կամ հավաքածու հրատարակելով «Նրիտասարդ հայ բանաստեղծներից», նրանց հետ տեսա և ղզվանք քարոզողին: Այս պախարակելի գործողության եղանակը ես առաջ բերի այստեղ, որ դու քո հորեղբորը թեթևամիտ մարդ չկարծես, եթե ասես, որ նա հովաքել է Ծառուրյանից և յուր հարաբերությունները կտրել:

17*

«Հիշողութիւնները», որ մեր գրվածներում շատ փոքր տեղ է բռնում կամ միանգամայն բացակա է, համեմատելով հետաքրքրական սլիտի լինի ինչպես ժամանակի և մարդկանց մի կենդանի նկարագիր:

Շնորհավոր նոր տարի, բարի կաղանդ:

Մնամ սիրող ձեզ Ա. Շահազիզ

1 խոսքը «Հիշողութիւններ Վարդանանց տոնի առթիւ» գրվածքի մասին է, որը սկզբում Շահազիզի զեկուցումն է եղել, հետագայում ընդարձակելով տպագրել է առանձին գրքով Մոսկվայում. 1901 թ.:

2 Բանաստեղծ Ալեքսանդր Մատուրյան (1865—1917):

3 Յու. Վեսելովսկու «Армянский поэт Смбат Шах-Азиз» գրքի առաջին հրատարակության առթիւ 1902 թ. «Новости дня» լրագրում լույս տեսած մի քննադատական հոդված՝ Առաքել Դավրիժի կողմից գրված Շահազիզի դեմ, որից և վշտացել էր բանաստեղծը: Այդ նույն հոդվածի հեղինակը ևև Ումանեցի հետ Մոսկվայում 1903 թ. հրատարակել է «Современная армянская литература» գրքույկը, որում դրական գնահատական չի տվել Շահազիզի ստեղծագործութիւններին: Հեղինակը գրքի առաջաբանում գրել է, որ այդ ժողովածուն կազմելուն օգնել է Ալ. Մատուրյանը: Շահազիզը, իմանալով այդ մասին, վշտացել է և խզել բարեկամական կապերը Մատուրյանի հետ: Հետագայում թյուրիմացութիւնը պարզվել է և նրանց բարեկամութիւնը վերականգնվել է:

Նստորև հրապարակում ենք Ալ. Մատուրյանի այդ օրերին Շահազիզին գրած նամակը կրճատումով:

15 ապրիլի 1903, Մոսկվա

Սիրելի Ամբաստ Սիմեոնովիչ

Հոգով ուրախ եմ, որ հրավիրվելով Ձեզ մետ՝ վերջապես միջոց եմ ստանում պարզելու ինձ այն հոգեմաշ հանելուկը, որն ահա 2 ամսից ավելի դրկած է ինձ Ձեր այնքան թանկագին մտերմութիւնից, ծանր քարի պես պառկած էր սրտիս: Գլուխ էի պատռում գտնելու դեպի Ձեզ գործած հանցանքս, որից կարող էիք այդչափ վիրավորված լինել Դուք, բայց չէի գտնում: Սակայն հավատացեք, իմ անվերջ սիրելի բանաստեղծ-բարեկամ, որ զրկված Ձեր բարեկամութիւնը վաւելելու պատվից, իմ սրտում անջինջ էր Ձեր բարոյական պատկերը. ես նրան փայփայում էի և մինչև կյանքիս վերջն էլ կփայփայեմ խորին երախտագիտութեան զգացմունքով: Ասածս ֆրազ չէ, սիրելի բանաստեղծ, ես միշտ իմ թույլ ուժերով պատրաստ եմ եղել ամենքի առաջ վկայելու դեպի Ձեր անձն զգացած հրապույրս: Եթե տարակուսելի է իմ ճշմարիտ սերը դեպի Ձեզ, այն ժամանակ անկեղծ սեր չկա աշխարհիս երեսին...

Ձեզ անկեղծ սիրող Ալ. Մատուրյան

24

30 նոյեմբերի 1906, Մոսկվա

Սիրելի Նովանդ

Անվտանգ հասնելով Մոսկվա, սենյակ վարձեցի «Ивейцария» հյուրանոցում, Մյասնիցկի փողոցի վրա: Սղանակը մինչև, համարյա, վերջին օրերս անտանելի էր: Օղը գիջին և մառախլապատ, փողոցները տլից ու ցեխից անանցանելի: Այժմ լավ է:

«Գեղունի»¹, հրատարակութեան մեջ կարդացի «Լեոնի վշտի» քննադատութիւնը ուր մի նոր բան չտեսա: Նույնպես լավ չհասկացա քննադատի վերջին անորոշ եզրակացութիւնը, որ կարծեմ այսպես էր. «Նա այժմ մեռակ նստած է Մոսկվայում»: Դու գուցե, ավելի որոշ մեկնութիւն տաւ այդ թեղին:

Ավելի հետաքրքրական է հ. ք. Զրաքյանի² քննադատութիւնը իմ գրական գործունեութեան վերաբերմամբ առհասարակ: Քննադատը կաթոլիկ վարդապետ լինելով, չի մոլորվել այն հանգամանքից, որ Շահազիզը տեղ-տեղ

հարձակվում է նույն հայ կաթոլիկ համայնքի վերա, որովհետև նա նկատել է, որ այն Շահազիզը հարձակվում է և լուսավորչականների վերա, կամենալով միայն ազգային տարրը ամրացնելու նույն ազգայինների մեջ անխտիր: Այդ քննադատությունը կարող ես տեսնել «Բաղմավեպի» մեջ ապրիլ ամսին, 1903 թիվ:

Նույն «Բաղմավեպի» մեջ դեկտ. 1903 կտեսնես մի լուսաբանություն նվիրված Յուրի Վեսելովսկու «Հայ բանաստեղծ Սմբատ Շահազիզ» շարադրության: Թողնելով հոգվածի մյուս մասերը, ես միայն հիշեմ այն տողերը, որ խոր ազդեց իմ բարոյական զգացմունքի վերա:— Հոգվածագիրը ասում է. «Խոստովանում ենք կան թեև քիչ չափով չափազանցություններ, շմեղագրենք հեղինակին (Վեսելովսկուն): Նրան թելադրել է երախտագիտության գեղեցիկ զգացմունքը՝ պ. Վեսելովսկին աշակերտել է պ. Շահազիզին, Լազարյան ճեմարանում ուսանելիս»:

Քեզ հայտնի է, որ Վեսելովսկին չի աշակերտել Շահազիզին, այլ միայն ներկա է եղել նրա դասախոսության ժամերին և այնուամենայնիվ հափշտակվել է նրանից: Որքան զգացմունքների խորություն և որքան հանդիմանություն այն աշակերտներին, որոնք ութ ամբողջ տարիներ իմ անկեղծ սերը վայելելով, չկարողացան ազատ մնալ իրանց անվայել հարաբերություններից դեպի նույն ուսուցիչը: Եթե Վեսելովսկու պես ազնիվ երիտասարդներ լինեին ղեկավար «Մուրճի» խմբագրության¹, միթե թույլ կտային իրանց փաստաբան թղթակցին մրել այնպիսի տողեր «Մուրճի» մեջ և անվանարկել մեր երեսունհինգամյա ուսուցչությունը Լազարյան ճեմարանում: Բայց ընդհատենք այս ծանր խոսակցությունը, որովհետև ավելի ծանր հարցեր են դրված հայության առջև: Վերջին լուրերը շատ անմխիթար են... Դու էլ երևի, լսել ես:

Վերադառնալով Մոսկվա, չորս նամակ գտա իմ հասցեով, հայտնի բան է, բոլորն էլ փողի հույսով: Դեռ չեմ պատասխանել, և չգիտեմ ինչ պատասխանեմ: Զոր մեր աշտարակցի բժիշկ Մնացական Հարությունյանը խնդրում է 2—3 հազար ռուբլի ճարել Աշտարակի փոխադարձ վարկի միջոցները զորացնելու, որպեսզի գյուղի աղքատները կարողանան էժան տոկոսով փող վերցնել: Որտեղի՞ց գտնեմ: Իմ սեփական միջոցներն էլ այնքան սուղ են, որ ստիպված եմ կտակս փոխել և ուրիշ կերպ հարմարել: Խնդիրը շատ դժվարանում է կտակի մասին: Պետական վերջին կարգադրությունները չեն ներում մի հաստատ կետի վերա կանգնել և ապահովել մեր խղճի թելադրությունը:

Է՛հ, նրվանդ, ժամանակը անտանելի է, չպետք է հուսահատվենք: Գործենք, որքան կարող ենք և մոլորված նավակի պես սպասենք խաղաղական եղերքին:

Սիրով ողջունում եմ ձեզ բոլորիդ:

Սիրող ձեզ՝ Ս. Շահազիզ

¹ «Դեղունի» — պատկերազարդ հանդես, լույս է տեսել Վենետիկում երկու ամիսը մեկ անգամ, 1901—1906, 1909, 1927 թթ.: Խմբագիրներ՝ Ս. Երեմյան, Մ. Պոտուրյան:

² Չրաքյան — Մխիթարյան միաբանության կաթոլիկ վարդապետ, հեղինակ «Հայ մատենագիրներ ժԹ դարում» աշխատության: Ունի Շահազիզին նվիրած հատուկ ուսումնասիրություն:

³ Շահազիզի Լազարյան ճեմարանի աշակերտներից և ինքն Սարգսյանը, լինելով «Մուրճի» խմբագիրներից մեկը, Հովհաննես Սպենդիարյանի (իրավաբան, սովորել է Լազարյան ճեմարանում, ապա Օդեսայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Եղել է ներսիսյան դպրոցի տեսուչ) հետ տպագրել է Տիգրան Հովհաննիսյանի հոգվածը Ս. Շահազիզի «Մի քանի»

խոսք իմ ընթերցողներին» գրվածքի մասին և անարդար քննադատության ենթարկել նրա երկարամյա մանկավարժական և գրական գործունեությունը։ Շահադիզը իր վրդովմունքը հայտնեց «Մուրճի» խմբագրին և ստացավ իր նամակի պատասխանը, որը տպագրում ենք կրճատումներով։

14 նոյեմբերի, 1904 թ. Թիֆլիզ

Հարգելի ուսուցիչ, Սմբատ Սիմեոնյ

Ինձ ցավ պատճառեց, երբ այսօր ինձ Հ. Սպենդիարյանը հայտնեց, որ Դուր նեղացել ևք «Մուրճում» Տ. Հ. մատենախոսականից Ձեր գրվածքի առիթով։ Ես իբրև իրական խմբագրող ամսագրի, իսկապես մեղավոր եմ, որ հավատ ընծայելով Տ. Հ., առանց կարդալու և շտկելու նրա տոնը, թույլ եմ տվել տպագրել Ձեզ վշտացնող խոսքերը։ Սակայն պետք է նկատի առնել այն սոսկալի ծանր բեռը, որ վիճակված է ինձ տանել մեն-մենակ իմ ուսերիս վրա ամենաանպատ պայմաններում։ Կարծեմ մի քիչ ներելի կլինեք, որ ես որպես ինձ լավ ծանոթ և ոչ խամ գրողի հոգվածի նկատմամբ լինելի մի քիչ վստահացող։ Նրբեք ոչ մի առիթով զժգոհության դեպք չունենալով իմ սիրելի ուսուցչից, — գնահատելով նրա ծառայությունը մայրենի գրականության և հասարակական լավագույն ձգտումներին, մի՞թե ես ինձ թույլ կտայի այդպիսի տոն...»։

4 Ֆինանսների մինիստրի թույլտվությամբ աշտարակեցիք ստեղծում են «փոխատու խնայողական ընկերություն»՝ գյուղացիներին վաշխառուների ձեռքից ազատելու համար։ Ս. Շահադիզին ընտրում են պատվավոր հոգաբարձու և խնդրում նրա համաձայնությունը։ Շահադիզը պատասխանում է. «Согласен, благодарю за честь. Сердечно приветствую родную ниву полезнейшим учреждением, отныне спасающим частный труд от сильных мира сего. Примите мою лепту 200 руб.». Ստանում է հեռագրի պատասխանը. «Родная нива сердечно благодарит за внимание своего достойного и отзывчивого сына. Аштарак»։

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ СМБАТА ШАХАЗИЗА

А. А. АВЕТИСЯН

(Резюме)

Эпистолярное наследие армянского поэта-демократа и общественного деятеля, преподавателя армянского языка и литературы Лазаревского института Смбата Шахазиза (1840—1907) в настоящей публикации представлено в основном его ценными письмами к племяннику—литературоведу Ерванду Шахазизу, дополняющими наши сведения о жизни поэта.